

Նատալիա Տեր-Գրիգորյան-Դեմյանյուկ

Աստվածաշնչի հայ թարգմանության
և աստվածաբանության մուլթ
կոդմերը

Բուկնոս Այրես 2020

Ter-Grigorian de Demianiuk, Natalia
Astvatsashnchi hay thargmanuthian ev astvatsabanuthian muth kogjmere / Natalia
Ter-Grigorian de Demianiuk. - 1a edición especial - Ciudad Autónoma de Buenos
Aires : Credo, 2020.
Libro digital, PDF

Archivo Digital: descarga y online
ISBN 978-987-47632-2-8

1. Teología. I. Título.
CDD 220.4

Բովանդակություն

1. <i>Ψυχή</i> և <i>πνεῦμα</i> - Հոգի և... (Հոգի ^օ) -----	4
2. Արամ Պաղդամ և Արամ Նախարարյիմ -----	20
3. Մատաղի մասին -----	32

Ψυχή և πνεῦμα Հոգի և... (Հոգի³)

Միշտ հավատացել եմ այն քարոզչությանը, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ամենալավն է: Եվ այդ պատճառով ուշադրություն չեմ դարձրել շատ ակնհայտությունների վրա... մինչև մեր հեղափոխությունը, որ տեղի ունեցավ ռուսական «*դուխով*» բառի կարգախոսի ներքո:

Ես այն ժամանակ մտածեցի. Ինչու² են մեր հայերը նախընտրում ռուսական բառը, անտեսելով հայկական «*նզով*»-ը, քանզի «*նզի*» բառը միշտ հասկացել եմ որպես ռուսական «*դուխ*», լատինական «*spiritus*» բառի հայկական տարբերակը: Համենայն դեպս որոշեցի փնտրել այն բառարաններում, ինչի հետևանքով ի զարմանք ինձ հայտնաբերեցի, որ «*նզին*» «*հնզու*» հոմանիշն է, այսինքն՝ նույն բանն է նշանակում: Մասնավորապես, Աճարյանի արմատական բառարանում կարդում ենք, որ *հնզին* ծագում է *հնզ*, այսինքն՝ *ցավ* բառից և նշանակում է *հոգի, անձ, մարդ, շունչ, սատանայ, սիրտ, կեանք, կենդանություն*: Այսպես է Աճարյանը բացատրում «*հնզի*» բառը, դիտելով այն մարմնական տեսակետից, քանզի կապում է այն «*ցավ*» հասկացության հետ:

Իսկ ինչ վերաբերում է «*նզի*» բառին, Աճարյանը գրում է. Տես «*հնզի*»:

Այս երկու հասկացությունները, ըստ էության, չեն տարբերվում նաև այլ հայերեն լեզվի բառարաններում: Ստացվում է, որ ընդհանուր առմամբ *հնզին* և *նզին* նույն բանն են նշանակում: Սակայն եթե այդպես լիներ, հայի ենթագիտակցության մեջ դրանք չէին տարբերվի: Եվ դրա ամենահզոր վկայությունը Գարեգին Նժդեհի գրվածքներն են, որտեղ նա «*նզի*» բառը առատորեն օգտագործեց, տարբերելով այն հոգուց, քանզի *հնզի* բոլորը ունեն, | ամեն մի կենդանի արարած, սակայն *նզի* - այնպես, որպես ինքն էր հասկանում՝ - ո՛չ բոլորը:

Համոզված լինելով, որ այդ խնդրի լուծումը կգտնեմ Աստվածաշնչի մեջ՝ դիմեցի Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը և հայտնաբերեցի, որ հունական բնագրի երկու տարբեր բառերը *Πνεῦμα* - ն (լատինական Վուլգատայի *Spiritus* - ը) և *ψυχή* - ն (Վուլգատայի *alma, anima*- ն) հայերեն մեկ՝ «*հնզի*» բառով են թարգմանված, ինչը անթույլատրելի է, քանի որ, ըստ Սուրբ Գրքի տեկստի և տրամաբանության, դրանք տարբեր հասկացություններ են: Եվ ամենակարևորը՝ դրանց տարբերել են առաքյալները, որ թողել են մեզ ավետարաններ, նամակներ և այլ գրվածքներ:

Տեսնենք, թե ինչ նկատի ունի Աստվածաշունչը «*հնզի*» բառի տակ:

Հոգի - ψυχή

«*Հոգու*» նշանակությունը Աստվածաշունչը հենց Ծննդոցի առաջին գլուխներից է սահմանում, որտեղ կարդում ենք.

«*Եւ Եհովայ Աստուածը հողի փոշուցը շինեց մարդը. Եւ նորա ռնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղաւ*»:(Ծննդ 2: 7)

Այժմ համեմատենք այն հունական բնագրի հետ:

καὶ ἐπλασεν ὁ θεὸς τὸν ἄνθρωπον χοῦν ἄπὸ τῆς γῆς καὶ ἐνεφύσησεν εἰς τὸ πρόσωπον αὐτοῦ πνοὴν ζωῆς καὶ ἐγένετο ὁ ἄνθρωπος εἰς ψυχὴν ζῶσαν (Ծննդ 2: 7)

Ինչպես տեսնում ենք, նորաստեղծ մարդուն վերաբերող հունական *ψυχή* բառը հայերեն թարգմանված է «*հոգի*» բառով: Ըստ տրամաբանության, դա հողի փոշուց ստեղծված մի անոթ է, որին Աստվածն մարդու ձև տվեց ու, շունչ փչելով նրա մեջ, կենդանացրեց: Կարևոր է նշել նաև, որ **ψυχή** բառի նշանակությունը հոգեբանության հետ է կապված և պիտի նշանակի մտավոր *հոգեբանական*, այսինքն՝ *հոգևոր մի անոթ*, ինչը մեզ հուշում է, որ, բացի մեզ ծանոթ նյութից, կա նաև հոգևոր նյութ: Այդ հոգևոր նյութից ստեղծված անոթը համ մարդուն է վերաբերում, համ էլ ամեն մի կենդանի արարածի, քանզի կենդանիներին ստեղծելուց Աստվածաշունչը նույն **ψυχή** բառն է օգտագործում.

καὶ εἶπεν ὁ θεὸς ἐξαγαγέτω τὰ ὕδατα ἐρπετὰ ψυχῶν ζῶσῶν καὶ πετεινὰ πετόμενα ἐπὶ τῆς γῆς κατὰ τὸ στερέωμα τοῦ οὐρανοῦ καὶ ἐγένετο οὕτως καὶ ἐποίησεν ὁ θεὸς τὰ κήτη τὰ μεγάλα καὶ πᾶσαν ψυχὴν ζῶων ἐρπετῶν ἃ ἐξήγαγεν τὰ ὕδατα κατὰ γένη αὐτῶν καὶ πᾶν πετεινὸν πτερωτὸν κατὰ γένος (Ծննդ 1: 20-21)

Այստեղ **ψυχῶν ζῶσῶν** բառակապակցությունը, որ մարդու նկատմամբ էր օգտագործվել, օգտագործվում է նաև կենդանիների նկատմամբ: Սակայն հայերենի թարգմանիչները, երևի, դա կարևոր չհամարելով, չեն պահպանել հունական բնագրի ցուցմունքը: Եվ կենդանուն մարդուց տարբերելու համար, **կենդանի հոգու** փոխարեն **կենդանի շունչ** են թարգմանել, այսինքն՝ փոխել են բնագրի խոսքը, ըստ իրենց մեկնաբանության:

«*Եւ Աստուած ասեց. Ջրերը եռան կենդանի շունչ ունեցող զեռուններով. եւ թռչուններ թռչեն երկրի վերայ երկնքի հաստատութեան երեսին: Եւ Աստուած ստեղծեց մեծամեծ կէտերը, եւ բոլոր կենդանի շունչ ունեցող սողունները, որ ջրերը եռացին նորանցով նորանց տեսակի պէս, եւ բոլոր թեւաւոր թռչուններն իրանց տեսակի պէս*»:(Ծննդ 1: 20-21)

Իհարկե, այս ինքնակամությունը անթույլատրելի է Աստվածաշնչի թարգմանության մեջ, քանզի Աստվածը Խոսքով և բառով է արարում: Եվ եթե նա մարդուն ու կենդանուն նույն բառով է սահմանում, ուրեմն նրանց տարբերությունը հոգու մեջ չէ: Բայց որտե՞ղ է այդ դեպքում: Հայ թարգմանիչը դա

չգիտի, այսինքն՝ նա անունկնդիր է Աստծո Խոսքի հանդեպ, մասնավորապես, նրա հոգուն և մարմնին վերաբերող հաղորդությունների հանդեպ:

Այն փաստը, որ, ըստ Ծննդոց 2: 7-ի, Ադամի մարմինը *«հողի փոշուց»* է ստեղծվել, քրիստոնեական աստվածաբանությունը բառացիորեն է մեկնաբանել, այսինքն՝ վերագրել է մեր նյութական մարմնին: Եվ դա արել է անտեսելով նույն Ծննդոց հաղորդությունը, որ մինչև մեղք գործելը Ադամն ու Եվան *«մերկ էին ու չէին ամաչում»:* (Ծն 2: 25) Իսկ մեղք գործելուց հետո առաջինը, ինչ զգացին, դա սեփական մերկության գիտակցումն էր և դրանից բխած ամոթը: Ուստի, ինչպես մեզ հաղորդում է Ծննդոցը, ցանկանալով թաքցնել իրենց մերկությունը՝ նրանք *«թզենու տերեւներն իրար կարեցին եւ իրենց համար գոգնոց շինեցին»* (Ծն 3: 7) Աստված, հասկանալով, որ մեղք են գործել (այսինքն՝ ոչ թե Իր Խոսքին են հետևել, այլ ստախոս Օձի), դուրս վռնեց նրանց դրախտից, որովհետև Օձի սուտ խոսքը, որ իրենցը դարձրին, կամ որով լցրեցին իրենց անոթները, քանդում է Աստծո արարչության հիմքերը, մահ մտցնելով նրա մեջ: Այդպիսի «փչացած», այսինքն՝ մահկանացու դարձաց Ադամը, այլևս չէր կարող ապրել Աստծո ստեղծած դրախտում, և Տերը տեղադրեց նրան իր ժխտմանը համապատասխան, բայց ժամանակավոր աշխարհ, որ *«բերկրության դրախտի դիմացն»* է գտնվում (Ծն 3: 24), որպես *չարր բարու* դիմաց: Բայց մինչ այդ Ինքը Ադամի ու Եվայի համար *«կաշուից զգեստներ պատրաստեց եւ հագրեց նրանց»:* (Ծն 3: 21)

Այդ *«կաշվե զգեստները»*, որ արհամարհված են մնում աստվածաբանության կողմից, ըստ էության, հոգու վրա քաշված ծանր նյութական մարմիններն են, բաղկացած մսից ու արյունից: Եվ որ Ադամն ու Եվան չկարողանան ետ վերադառնալ, *«հրամայեց քերովբեներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել դէպի կենաց ծառը տանող ճանապարհները»:* (Ծն 3: 24)

Չմոռանալով, որ Աստվածաշնչային հաղորդությունները առակների ձևով են տրված՝ հասկանանք, թե ի՞նչ կատարվեց իրականում: Ադամի և Եվայի հոգևոր մարմնի, այսինքն՝ հոգու վրա սփռվեց քայքայվող նյութական մի մարմին մսից ու արյունից, որը փականքի մեջ սեղմելով հոգուն, իր քայքայիչ ցավը փոխանցեց նրան: Այդ *«կաշվե զգեստները»*, որ նոր մարմին դարձան նրանց համար, փակեցին նրանց աչքերից Աստծուն, դրախտն ու նույնիսկ իրենց սեփական հոգևոր մարմինը: Իսկ վերադարձի ճամփան միայն այդ մսի ու արյան մահով արձանագրվեց: Այլ կերպ ասած, մահաբեր *քերովբեների բոցեղեն սրի շուրջանակը* ոչ այլ բան է ներկայացնում, քան այդ նոր մարմնի, կամ, ավելի ճիշտ, մսի և արյան *բոցեղեն* կրքերը, որ թույլ չեն տալիս մարդուն դրախտ, այսինքն՝ Աստծո թագավորություն վերադառնալ: Այսպիսով մարդը իր *«կաշվե զգեստներին»* պատով անջատվեց Աստծուց և Նրա ստեղծած դրախտից: Ինչպես նկատում է Պողոս առաքյալը, *«այս մարմնումը կենալով՝ Տերիցը օտարանում ենք»:* (2 Կոր 5: 6) Ավելի ճիշտ թարգմանումը կլինի «հեռանում ենք», քանզի հունական բնագրի **ἐκδημούμεν** բայը նշանակում է «հեռանալ» Տերիցը, մեզ համար Նրա ստեղծած տնիցը:

Առաքյալ Պողոսը այդ ներքին և արտաքին մարմինները *«ներքին մարդ»* և *«արտաքին մարդ»:* անվանեց:

Եվ այդ երկու մարդը թշնամի դարձան, քանզի ներքինը՝ մաքուր էր, իսկ արտաքինը մեղքի մարդ էր: Ահա թե ինչպես է նույն առաքյալը նկարագրում այդ թշնամությունը.

«*ես ինքս մտքով ծառայում եմ Աստուծոյ օրէնքին, իսկ մարմնով մեղքի օրէնքին*»: (Հրոմ 7: 25)

Հոգին (*ψυχή*), ինչպես ասացի, մարդու մտավոր մարմինն է: Ուրեմն հոգով նա ծառայում է Աստծո օրէնքին, իսկ «*կաշվե զգեստներով*», այսինքն մահացու մարմնով՝ մեղքի օրէնքին:

«*Որովհետեւ ես հաւանում եմ Աստուծոյ օրէնքին՝ ներսի մարդու վր, - պարզաբանում է նա: - Բայց տեսնում եմ ուրիշ օրէնք իմ անդամներումը՝ որ իմ մտքի օրէնքի դէմ պատերազմում է, եւ ինձ գերի է բռնում այն մեղքի օրէնքովը՝ որ իմ անդամներումն է: Ես ինչ խեղճ մարդ եմ. Ո՞վ կ'ազատե ինձ այս մահի մարմնիցը*»: (Հրոմ 7: 22-24)

Այստեղ ինձ թույլ եմ տվել Հայ առաքելական Եկեղեցու թարգմանության «*կապրեցնի*» բառի փոխարեն օրտագործել արևմտյան լեզվով տարգմանության «*կազատե*» բառը օգտագործել, քանզի դա ավելի ճիշտ է դրսևորում տեկստի միտքը: Մինչդեռ «*Կապրեցնի*» թարգմանությունը այն սխալ մեկնաբանության արդյունքն է, որ իբրև թե Աստված պիտի ապրեցնի նույն նիւթական մարմինը («*կաշվե զգեստները*»), որը մարդը ունեցել է այս ժամանակավոր աշխարհում: Այստեղ նույնպես հայ թարգմանիչը իր մեկնաբանությունն է նախընտրել բնագրի **ρῶμα** բային, որ նշանակում է «*ազատե*»: Այդ մոլորությանը դեռ կանդրադառնամ այստեղ:

Իսկ մեկ ուրիշ տեղ ավելացնում է.
«*թէ եւ մեր դրսի մարդը փճանում է, (ծերանում է, փլուզվում է իմաստով) բայց մեր ներսի մարդն օրէցօր նորոգվում է: Որովհետեւ մեր այժմեան թեթեւ նեղութիւնը ամենազերազանց յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար, Որ այս երեւող բաներին չենք մտիկ անում, այլ աներեւոյթներին. Որովհետեւ երեւողները ժամանակաւոր են, իսկ չ'երեւողները յաւիտենական*» (2 Կոր 4: 16-18)

Ինչպես տեսանք, արտաքին նյութական, երևող մարմինը նա անվանում է *մահի մարմին*, այսինքն՝ ժամանակավոր մարմին: Դա այն մարմինն է, որի մասին Աստվածը զգուշացրել էր Ադամին, ասելով.

«*Դրախտում ամէն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերէք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կը դառնաք*»: (Ծն 2: 16-17)

Հենց այդ արտաքին մարմինն էր, որ մահկանացու դարձրեց մարդուն: Նա տրվեց Ադամին, որ, հավիտենության համար ստեղծված, բայց Օձի պիղծ խոսքերով լցված՝ նա չկործանվի միանգամից, այլ ժամանակ ունենա խորհել և ճիշտ արձագանքելով իրողություններին, փրկվել: Ուստի Աստծո աչքը միշտ ներքին մարդու վրա է: *Արտաքին մարմինը* ոչ մի նշանակություն չունի նրա համար, քանզի դա ներքին մարդու *ստվերն* է միայն:

Պարզ է, ուրեմն, որ ժամանակավոր լինելով՝ արտաքին, մեղքի մարմինը չի կարող մտնել հավիտենության մեջ: Ինչպես նույն Պողոս առաքյալն է ասում,

«*մարմին եւ արիւն չեն կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել. Եւ ոչ էլ ապականութիւնը ժառանգում է անապականութիւնը*» (1 Կոր 15: 50), - որովհետև, - կարծես թե, շարունակելով առաքյալի խոսքը, ասում է Սիրաքը, -

«*մարդու մարմինն ու արիւնը չարի մասին են մտածում*»: Եվ այդ տեսակետից «*բոլոր մարդիկ հող եւ մոխիր են*» (Միքայ 16: 28-29), այսինքն՝ մահկանացու են, իսկ իրենց կյանքը՝ *պատրանքային*:

Երկու դեպքում էլ բնագրում մարմնի (σῶμα-ի) փոխարեն **օձրջ** է օգտագործվել, որ «*միս*» է նշանակում: Դրանց տարբերելը միանգամայն կարևոր է Աստվածաշնչի տեկստերը ճիշտ ընկալելու համար:

Ինչևէ, երբ այդ արտաքին մարմինը (σῶμα-ն) կփլուզվի, երեվան կգա ներքին, հոգու մարմինը (σῶμα-ն)՝ իր ներկա վիճակով հանդերձ, որ ցույց կտա, թե ցավը ի՞նչ աստիճան է ազդել հոգու, այսինքն՝ մարդու մտավոր մարմնի վրա, ի՞նչ եզրակացություններ է նա արել դրանից, ու՞մ խոսքն է նախընտրել ի վերջո. Աստծո՞ թե նորից Օձի, և ըստ դրան, մարդն կամ հավերժ կյանք կմտնի, վերադառնալով Աստծո թագավորություն, կամ էլ հավերժ մահ Աստծո թագավորությունից դուրս, այսինքն՝ կյանքից դուրս, քանզի, ինչպես մեզ հաղորդում է Սողոմոնը,

«*Աստուած մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար եւ արարել է նրան ըստ իր բարերարութեան պատկերի: Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով. եւ ովքեր նրա բաժինն են, նրանք էլ պիտի կրեն այն:*» (Իմաստ 2: 23-25)

Ուրեմն, իրական *մարդը*, որին ավելի ճիշտ կլիներ անվանել *արի*,՝ *հոգին* է, քանզի «*մարդ*» բառը, ինչպես ցույց է տալիս դրա արմատական վերլուծությունը, «*մեռնել*» և «*մահ*» բառից է առաջացել և վերաբերում է մահացո մարմին կրողին:

Նայել Աճառյանի հայկական արմատական բաժարանը: Իսկ *արին* հոգևոր ծագում ունի: Նա կդրսևորվի, երբ Ադամի վրայից այդ մահացու զգեստը կհանվի: Ահա թե ինչպես է դրա մասին պատմում Հիսուսը, ըստ Թոմաս Հուդա առաքյալի ներքևը նշված պարականոն կտակարանի: Այստեղ, փաստորեն, անդրադառնալով Ծննդոցում ակնարկված «*կաշվե զգեստներին*»՝ Նա ասում է.

«*Երբ դուք կմերկանաք ու չեք ամաչի և կվերցնեք ձեր զգեստները, կոնեք ձեր ոտքերի տակ և մանուկների նման կտրորեք նրանց, այն ժամանակ կտեսնեք միշտ կենդանի Աստծո որդուն և էլ չեք վախենա*»: (Թոմաս Հուդայի կտակ 42)

«Когда вы обнажитесь и не застыдитесь и возьмете ваши одежды, положите их у ваших ног, подобно малым детям, растопчете их, тогда [вы увидите] сына того, кто жив, и вы не будете бояться.» (Еванг. От Фомы Иуды 42) http://www.krotov.info/acts/01/joseph/apok_28.html

Ի՞նչ են նշանակում այս խոսքերը: Նշանակում են, որ երբ դուք կհասկանաք, որ «*կաշվե զգեստները*» պատրանք են և վերջ տալով նրանց պաշտամունքին՝ կտվորեք իշխել ձեր մահացո մարմնի վրա և նույնիսկ գոհաբերել այն իր կրքերով հանդերձ հանուն ձեր հոգևոր մարմնի, որ համապատասխան է Աստծո Խոսքին, այդ ժամանակ վախը կհեռանա ձեզանից: Իսկ երբ մահաբեր զգեստը հանելու ձեր ժամը գա և դուք նորից մերկանաք, այդ ժամանակ կկարողանաք տեսնել Աստծուն:

Այդ «*կաշվե զգեստներին*» (Ծննդոց 3: 14-24) իրենց մահաբերության համար Աստվածը Դավթի շրթերով «*անեծք*» է անվանում և այսպես է նկարագրում նրանց ազդեցությունը մարդու (հոգու) վրա.

«Անէծքը, որ նա հազար ինչպէս հանդերձ, - ասում է Նա, - թող ջրի պէս լցուի նրա փորը, եւ ձէթի պէս՝ նրա ոսկորների մէջ: ¹⁹Թող նրա համար հազնելու զգեստ լինի այն, եւ մէջքին կապելու մշտական գօտի: ²⁰Այս է վարձը նրանց, ովքեր բամբասում էին ինձ Տիրոջ առջեւ, եւ ովքեր չարախօսում էին իմ մասին»: (Սաղ 108: 18-20)

Պատահական չէ Դավիթի այդ մահաբեր զգեստների համեմատությունը *անէծքի* հետ, քանզի, ինչպէս տեսանք, դրանք տրվեցին մարդուն իր հոգու անոթը ստախոս Օձի խոսքով լցնելու ու սնելու պատճառով, այն դեպքում, երբ նա ստեղծված էր, որ լցվեր ու սնվեր Աստծո ճշմարիտ Խոսքով, Նրա կենաց *հացով*:

Ուստի զարմանալի չէ, որ մարգարե Եսայան իր հերթին նույն մարմինը (միսը) *«գերեզմանի»* հետ է համեմատում, որը ստեղծվեց հոգին փչացնող ու սպանող Օձի *«փրթված պղծությունները»* ծածկելու համար:

«Բնակվում են գերեզմաններում,- կարդում ենք իր գրքում, - եւ գաղտուկ տեղերում օթեւանում, որոնք խոզի միս են ուտում, եւ որոնց ամանների մէջ պղծութիւններ կան փրթուած. Որոնք ասում են՝ Մէկ կողմ քաշուիր, ինձ մի դիպչիր, որ ես քեզանից սուրբ եմ: Սորանք ծուխ են իմ ոնգաց մէջ, բորբոքած կրակ են ամեն օր: Ահա գրուած է իմ առաջին, չ'պիտի լռեմ, այլ պիտի հատուցանեմ, եւ հատուցանեմ նորանց ծոցը.»: (Եսա 65: 4-6)

Այս վերջինները, բացի իրենց արտաքին մարմնից (*«ամաններից»*), ոչինչ չեն ընկալում, ուստի ասելով *«հատուցանեմ նորանց ծոցը»*՝ Աստվածը կանխատեսում է նրանց հոգու (ծոցի) կործանումը, ինչպէս կործանվում է թույն կերածը, քանզի Օձի խոսքը, որով սնվում է մարդը, իսկապէս, մահաբեր թույն է նրա համար: Այդպիսինը, հոգևոր մարմնի *«գերեզմանից»* (այսինքն՝ արտաքին նյութական մարմնից) դուրս գալուց հետո, իրական մահով է մեռնում, որը չգոյությունից էլ սարսափելի է, քանզի նշանակում է դժոխք ընկնել, որովհետև, ինչպէս պարզաբանում է մարգարեն, *«նրանց որդը չի մեռնելու, նրանց կրակը չի հանգչելու, նրանք յայտնի պիտի լինեն բոլոր մարմնաւորներին»:*

«Որդ» ասելով՝ մարգարեն նկատի ունի նրանց Օձի զավակ դարձած փչացած հոգին, իսկ *«մարմնաւորների»* տակ՝ նրանց, ովքեր իրենց արտաքին մարմնի կրթերով են ուղղերցվում:

Մինչդեռ նրանց, ովքեր հասկանում են իրենց գործած սխալը և ունկնդրում են Աստծո Խոսքը, Նա որպէս որդիներ է ընդունում և ասում նրանց Եզեկիել մարգարեի շրթերով.

«Ահա ես բաց եմ անելու ձեր գերեզմանները եւ հանելու եմ ձեզ ձեր գերեզմաններից, ո՛վ իմ ժողովուրդ: Տանելու եմ ձեզ Բսրայէլի երկիրը: ¹³Ու պիտի իմանաք, որ ես եմ Տէրը, երբ բաց անեմ ձեր գերեզմաններն ու հանեմ ձեզ ձեր գերեզմաններից, ո՛վ իմ ժողովուրդ»: (Եզեկ 37: 12-13)

Այստեղ հոգու ազատագրումը *«կաշվե զգեստներից»* Տերը նույնացնում է գերեզմաններից դուրս բերելուն: Եվ դա այդպէս է ուղղակի և անուղղակի իմաստով: Իմիջայլոց, ասեմ, որ այս խոսքերի տրամաբանությունը ամբողջովին

համընկնում է մեր Հայկի մասին ավանդության հետ, այն տարբերությունով միայն, որ Արարատյան երկիրը այստեղ Իսրաէլի *էրկիր* է անվանված:

Ուրեմն կարող ենք ամփոփել, որ, ըստ Աստվածաշնչի բուն իմաստի, իրական մարդը *հոգին* է, իսկ հոգին՝ դա նրա աստվածաստեղծ *հոգևոր անոթ/մարմինն* է, որը Աստվածաշնչում «*Աստծո փառք*» է կոչվում: (Հրոմ 1: 21) Իր էությամբ նա մտավոր կառույց է, որը տարբերվում է «*կաշվե զգեստների*» նյութական կառույցից:

Այժմ, երբ հասկացանք, թե ինչ ասել է *ψυχή* (*հոգի*) և ո՞րն է նրա տարբերությունը նյութական մարմնից, անցնենք **πνεύμα** հասկացությանը:

Πνεῦμα

Այս բառի հայերեն թարգմանությունը շփոթություն է առաջացնում հայ ընթերցողի մտքում: Քննենք, օրինակ, այս հատվածը.

«*Սերմվում է շնչաւոր մարմին, եւ յարութիւն է առնում հոգեւոր մարմին. Կայ շնչաւոր մարմին, կայ եւ հոգեւոր մարմին: Այսպէս էլ գրուած է, թէ Առաջին մարդն՝ Ադամը կենդանի շունչ եղաւ, երկրորդ Ադամը կենդանարար հոգի»:* (1Կոր 15: 44-45)

⁴⁴σπείρεται **σῶμα ψυχικόν** ἐγείρεται **σῶμα πνευματικόν** εἶ ἔστιν **σῶμα ψυχικόν** ἔστιν καὶ **πνευματικόν** ⁴⁵**οὕτως** καὶ γέγραπται ἐγένετο ὁ πρῶτος ἄνθρωπος Ἐδὰμ εἰς **ψυχὴν ζῶσαν** ὁ ἕσχατος Ἐδὰμ εἰς **πνεῦμα ζῶποιοῦν** (1Կոր 15: 44-45)

Նկատենք, որ հունական տեքստը այստեղ նույն **σῶμα ψυχικόν**, (*կենդանի հոգի*) բառակապակցությունն է օգտագործում, որը օգտագործել էր նորաստեղծ Ադամի նկատմամբ: Բայց հայերենում այս անգամ «*կենդանի հոգու*» փոխարեն

«*շնչավոր մարմին*» ենք կարդում, իսկ «*հոգի*» բառով **σῶμα πνευματικόν** - ն է թարգմանվել:

Ինչու՞:

- Որովհետև թարգմանչի համար պարզ չէ *ψυχή* և *πνεῦμα* հասկացությունների տարբերությունը: Այսինքն՝ թարգմանիչները իրենց այդ անճշտությունը թույլ են տվել, որովհետև որոշել են ինչպես «*հոգի*» ներկայացնել ոչ թե առաջին, այլ երկրորդ Ադամին, այսինքն՝ երեվան եկած Աստծուն: Սրանով բացահայտվում է այն փաստը, որ թարգմանիչները չեն ընկալել տեկստի իմաստը: Այդ նույն պատճառով էլ այն չի սինքրոնիզացվել: Հասկանալի է նաև, որ այս երկու բառին վերաբերող հաստատվածների հայերեն թարգմանությունը, ոչ թե թարգմանություն է, **այլ մեկնաբանություն**, և սխալ մեկնաբանություն:

Տեսնենք, թե ու՞մ է ակնարկում բնագիրը ***Πνεῦμα*** բառով:

Այդ հարցի պատասխանը գտնում ենք Հովհաննես առաքյալի ավետարանում, որի բնագրում ասված է.

πνεῦμα ὁ θεός (Հովհ 4: 24)

Դժբախտաբար, հայերեն դա թարգմանվել է որպես «*Հայրը, որ Հոգի է*»: Մինչդեռ ճիշտ կլիներ թարգմանել «*Հայրը, որ Ոգի է*», իհարկե, տարբերելով հոգին ոգուց, որովհետև «*հոգին*»՝ *ψυχή* է, իսկ բնագիրը այստեղ **Πνεῦμα** է գործածել:

Այսինքն՝ վերադառնալով վերը ներկայացված 1 Կոր 15: 44-45 հատվածի բնագրին, որտեղ երկրորդ Ադամը սահմանված է, որպես *Πνεῦμα*, կարող ենք ասել, որ երկրորդ Ադամը Աստծո դրսևորումն է:

Ուրեմն, ըստ հունական բնագրի, խոսքը այստեղ գնում է մարդու և Աստծո մարմինների մասին, որովհետև մարդը դա՝ *Ψυχή*-ին է, իսկ *Πνεῦμα* – ն՝ Աստվածը: Հիմա ո՞րն է այդ մարմինների տարբերությունն ու հարաբերությունը: Հայերեն թարգմանությունը դա մեզ ցույց չի տալիս, ընդհակառակը՝ մոլորության մեջ է գցում, որովհետև այդ սխալը անցնում է այսպիսով Սուրբ Երրորդության սահմանումին և եռապատկվում: Սուրբ Երրորդությունը Աստծո և մարդու հարաբերության բացահայտումն է:

Ասվածը լավ հասկանալու համար, անցնենք այդ հարցի վերլուծությանը:

Սուրբ Երրորդություն: Ոգու և հոգու ամուսնություն

Սկսենք նրանից, թե ինչպես է բնագիրը սահմանում Սուրբ Երրորդությունը և ինչպես է դա անում հայերեն թարգմանությունը:

Համեմատենք բնագիրը հայերեն թարգմանության հետ.

¹⁹ πορευθέντες οὖν μαθητεύσατε πάντα τὰ ἔθνη βαπτίζοντες αὐτοὺς εἰς τὸ ὄνομα **τοῦ πατρὸς καὶ τοῦ υἱοῦ καὶ τοῦ ἁγίου πνεύματος** (ՄԹ՝ 28: 19)

«*Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք **Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով***»: (ՄԹ՝ 28: 20)

Ինչպես տեսնում ենք, հունական բնագրում Սուրբ բառը ոչ թե «*Հոգուն*» (*ψυχή*)-ին է վերաբերում, այլ *πνεῦμα* -ին:

Ուրեմն ի՞նչ է ստացվում հայկական տարբերակում: - Այն, որ Հայրը՝ հոգի է, Որդին (մարդը)՝ հոգի է, Սուրբ հոգին՝ նույնպես հոգի է: Բայց ո՞րն է այդ երեքի տարբերությունը:

Սուրբ Երրորդության առեղծվածը հասկանալու համար հիշենք Նոյի որդիների մասին առակը, քանզի այն Նրա բացահայտումն է:

Ըստ այդ առակի, Նոյը երեք որդի ուներ *Սեմ*, *Քամ* և *Հաբեթ* անուններով, որոնց նշանակությունն ու ով լինելը պարզաբանում են Նոյի հետևյալ խոսքերը, ասված հայտնի իրողություններից հետո: Դրանց մանրամասն վերլուծությունը տվել եմ իմ ուսերեն և իսպաներեն լեզվով գրված գրքերում, օրինակ, «Шесть дней творения и седьмой день.» (Буэнос-Айрес, 2013) գրքի «Загадка сыновей Ноя» գլխում: Իսկ այստեղ

միայն եզրակացությունները կներկայացնեն:

«Անիծյա՛լ լինի Քանանը»:

Թող որ նա իր եղբայրների ամենաստոր ծառան լինի»:
Ապա ավելացրեց.
«Օրհնյա՛լ լինի Եհովան՝ Մեմի Աստվածը,
Եվ թող Քանանը ծառա լինի նրան:
Թող որ Աստված մեծ տարածք շնորհի Հաբեթին,
Եվ թող նա Մեմի վրաններում բնակվի:
Թող Քանանը նաև նրան ծառա դառնա»: (Ծննդ 9: 25-27)

Այս խոսքերի վերջին հատվածից պարզ է դառնում, որ *Հաբեթը* նա է, ով, ըստ Արարչի, պիտի բնակվի *Մեմի* վրաններում: Տեսնենք հիմա, թե ո՞վ է *Հաբեթը*:

Հաբեթի անվան իմ էթիմոլոգիական վերլուծությունը ակնհայտ ձևով ցույց է տալիս, որ անվան ծագումը բացահայտում են հնագույն հայկական *հավետ* և հին պարսկական *հավե*, նույն «*հավերժական*» իմաստով, ածականները: Այդ բառերը իրենց նշանակությամբ ու հնչողությամբ նույնանում են աստվածաշնչյան YHWH (*Յահվեհ* կամ *Յեհովա*) տետրագրությանը, որը մեկնաբանվում է որպես «*Ես այն Աստուածն եմ, որ է*»: (Ելք 3.14), այսինքն, *Նա, ով հավերժ է. Նա, ով է, էր և կլինի*: Նշված էթիմոլոգիական վերլուծումը համապատասխանում է Նոյի վերը բերված խոսքերի հենց վերջին հատվածին.

*«Աստուած թող բարգաւաճեցնի **Յաբեթին, նա թող բնակուի Մեմի տանը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան**»:* (Ծն 9: 27)

Ի՞նչ են նշանակում այս խոսքերը: Միայն մեկ բան. որ *Յահվեն* (կամ *Եհովան*), կամ *Հաբեթը*, այսինքն՝ Աստվածը, որ *πνεῦμα* է, պիտի ապրի *Մեմի* տանը, այսինքն՝ մարդու հոգում (*ψυχή*-ում), փոխակերպելով նրա մարմինը, ըստ Իր կերպարի և նմանության: Այս եզրակացությունը հաստատվում է նույն հատվածի հետևյալ տարբերակով, որ գտնում ենք Հին կտակարանի հայտնի պարականոն գրքերից մեկում.

*«Օրհնյալ լինի Մեմի Տեր Աստվածը, **Աստվածն թող բնակվի Մեմի տանը**»:* *Книга*

Юбилеев. Введ. и рус. пер. проф. прот. А. Смирнова: 2-й вып. апокрифов Ветхого Завета. — Казань, 1895. Гл.VIII -

http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm

Այստեղից պարզվում է, առաջինը, որ *Հաբեթը*՝ Աստծո *πνεῦμα*-ն է ներկայացնում, որ *Մեմը*՝ դա նույն *Ադամն* է, այսինքն՝ *մարդը (արին)*, որ ստեղծված է Աստծո կերպարը ստանձնելու համար: Բայց դա միայն այն դեպքում կիրականանա, երբ *Մեմի* (աստվածաստեղծ *հոգու*) մեջ ապրի *Հաբեթը*, կամ, այլ կերպ ասած, *Սուրբ πνεῦμα*-ն, որին այսուհետև ***նզի*** կանվանեմ, որովհետև դա հոգի չէ, ինչպես տեսանք, այլ օգտագործում է հոգին իր դրսևորման համար:

Ուրեմն ի տարբերություն հոգու, որ հոգևոր անոթ է, *πνεῦμα* -ն անձև Աստծո Սուրբ Ոգին է, որը, լցնելով հոգին, նրան Իրեն համապատասխան ձև է տալիս:

Այդ նույն *Մեմու* Իր բնակվելու միտքը Աստվածը մարգարեների շրթերով շատ անգամ է կրկնվում: Օրինակ, Եզեկիելի շրթերով Նա ասում է նկատի ունենալով իր *Ոգին*, չնայաց որ հայերեն թարգմանության մեջ *Ոգու* փոխարեն միշտ «*հոգի*» ենք տեսնում:

«Իմ **հոգին** տալու եմ ձեզ, եւ դուք կենդանանալու էք: Ձեզ դնելու եմ ձեր երկրում, եւ դուք պիտի իմանաք, որ ես եմ *Տէրը*: Ասացի ու կատարելու եմ», - ասում է *Տէր Աստուած*: (Եզեկ 37: 14)

Այստեղ նույնպես բնագրում **Պեւմա է**, այսինքն՝ «*ոգի*» և ոչ թե **փսչի (հոգի)**: Նույնիսկ տրամաբանությունն է պահանջում *Ոգի* թարգմանել և ոչ թե *հոգի*, քանզի արդեն ստեղծված *հոգուն* ինչպե՞ս կարելի է մեկ ուրիշ *հոգի* տալ: Բայց *Ոգի* կարելի է տալ, այսինքն՝ ոգեւցնել նրան, որ Աստծո պատկերը ընդունի: Համեմատության համար միայն ասեմ, որ ոգին (**Պեւմա-ն**)՝ այն սերմն է, որ դրվելով հոգու մեջ, նոր մարմին է ստեղծում՝ Աստծո մարմինը: Այս է Աստծո և մարդու (Արիի) «ամուսնության» հիմքը, որի հետևանքում Աստծո (Հոր) կերպարն է ծնվում: Դա շատ կարևոր է հասկանալ: Մակայն, ավա՛ղ, այդ երկու բառի չտարբերելը տեսնում ենք Աստվածաշնչի հայերեն թարգմանության ամեն մի քայլում:

Ուրեմն, ինչո՞վ են տարբերվում հոգին (**փսչի-ն**) ու ոգին (**Պեւմա-ն**):

Տարբերվում են նրանով, որ հոգին հոգևոր անոթ է, իսկ Սուրբ *Ոգին* անձն բարոյական հոսանք է, որ լցնելով անոթը, նոր պատկեր է ստեղծում: *Հոգին* և *Ոգին* չտարբերելը տեղ է տալիս շատ մեծ շփոթությունների:

Ոգին է բացահայտում մարդու կենաց ու մահացո էությունը: Ուստի մարդը (արին)՝ անմահ Աստված է, եթե իր մեջ Աստծո Սուրբ Ոգին է ապրում: Մակայն նա կենդանի արարածներից մեկն է, երբ նրա մեջ ստախոս ու եսասեր Օձի ոգին է տեղավորվում: Այդ դեպքում նա կրում է տարբեր արարածների կերպարներ, ինչը նկատի ունենալով, ասել է առաքյալ Պողոսը.

«*Եւ անեղծն Աստծու փառքը փոխեցին՝ այն նմանեցնելով մարդու եղծելի պատկերի եւ թռչունների եւ չորքոտանիների եւ սողունների*»: (Հրոմ 1: 23)

Այժմ անցնենք *Քամին* և տեսնենք, թե ո՞վ է նա:

Նա այն անհրաժ վավակն է, որ, ծաղրելով, անարգեց Հորը և որի պատճառով մարդը մահացո մարմին ձեռք բերեց, քանզի նա նույն Օձն է, որի խոսքով լցվեց Ադամը, ըստ վերջինի մասին առակի: Այլ կերպ ասած, *Քամը*՝ «*կաշվե զգեստների*», կամ **օձք** –ի անմաքուր, եսասեր և խաբեբա ոգին է: Նա անիծվում է իր Հոր Նոյի (Աստծո) կողմից, որովհետև քանդում է արարչությունը: Եվ քանի մարդը մահկանացի մարմնի (**օձք** –ի) մեջ է ապրում, փրկվելու համար նա պետք է *հոգով (Մեմով)* և *Ոգով (Հաբեթով)* միշտ ճնշման տակ պահի այդ եսասեր ոգուն, այսինքն՝ *Քամին*, որ դրսևորվում է կրքերի միջոցով, որովհետև ճնշելով նրան, ճնշվում են «*կաշվե զգեստների*» կրքերը: Իսկ եթե հակառակն է լինում, այսինքն՝ *Մեմը* (մարդը) լցվում է *Քամով* (որ ժամանակավոր կրքերի արքան է), առաջինը քանդվում է:

Քամը ընկած է մարդու և Աստծո միջև արքելակելով նրանց միությունը: Բայց նա կփլուզվի, երբ *Մեւր* և *Հարեթը* մեկ դառնան, քանդելով իրենց միջև ընկած և իրենց բաժանող *Քամ*-միջնորմին: Առաջինը դա արեց Հիսուս Քրիստոսը, Որը խաչելով *Քամի* տունը («*կաշվե զգեստները*»), Աստծո հետ միացավ: Այդ փաստն է նշել առաքյալը, ասելով Հիսուսի մասին.

«*նա է մեր խաղաղութիւնը, նա, որ երկուսը մեկ դարձրեց. քանդեց իր մարմնի մեջ միջնորմը՝ թշնամութիւնը*» (Եֆ 2: 14)

Այդ երկուսը, որոնց Նա մեկ դարձրեց,՝ դա աստվածաստեղծ *հոգին* է (ոչ թե «*կաշվե զգեստները*», կամ նյութական մարմինը, ինչպես ընդունված է մտածել) և *Աստծո Սուրբ Ոգին*: Երբ դրանք մեկ են դառնում, դրսևորվում է *Երրորդը՝ Հայր/Աստվածը*: Սա է Սուրբ Երրորդության իմաստը: Նույն միությունը նկատի ունի Աստվածաշունչը, երբ ասում է Ադամի և Եվայի մասին. «*եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին*» (Ծննդ 2: 24), որովհետև մեկը Ոգու կերպարն է, մյուսը՝ հոգու: Այս ամուսնությունը *Աստծո* և *այրի* ամուսնությանն է վերաբերում, որը, ինչպես ասվեց, Սուրբ Երրորդության հիմքն է կազմում:

Եթե այդ միության իմաստը չի հասկացվում, Սուրբ Երրորդությունը վաղ թե ուշ ժխտվում է: Մենք, հայերս, չենք ժխտում այն, բայց և չենք հասկանում... Իմիջայլոց, դա չեն հասկանում նաև մնացած քրիստոնեական դավանանքները, չնայաց նրան, որ ճիշտ են թարգմանել հունական բնագրի *Πνεύμα-ն* ու *Ψυχή-ն*, սակայն ճիշտ չեն մեկնաբանել դրանք: Ուստի արդարության համար պիտի ասել նաև, որ մեր սխալ թարգմանության մեղքը միայն մերը չէ, այլ այդ հասկացությունների բոլոր քրիստոնեական դավանանքների ընդհանուր համաձայնության բերված մեկնաբանությունը, քանզի *ψυχή-ի* (*alma, anima-ի*) և *πνεῦμα -ի* (*Spiritus-ի*) տարբերությունը պարզ չէ նաև ուղղափառների, կատողիկների և այլ քրիստոնեական դավանանքների համար, որ *ψυχή-ն* չեն տարբերում «*կաշվե զգեստներից*», - այսինքն՝ արտաքին մարմնից և ամեն ինչ վերջինի հետ են կապում:

Դրա մեջ համոզվելու համար տեսնենք, թե ինչպես է մեկնաբանում այդ երկու հասկացությունները, օրինակ, **Ուղղափառ Եկեղեցին**:

Նա, հետևելով հիմնականում որոշ եկեղեցական հայրերի, և առաջին հերթին՝ Հովհաննես Դամասկոսի ուսմունքներին՝ *հոգին* համարում է «**Աստծո կողմից ստեղծված ոգի (дух), որը իր բնույթով նման է հրեշտակներին և անձն է**», այսինքն: ոչ մի ձև չունի: <http://www.veraproslavnyaya.ru/?Dusha> «сотворённый Богом дух, подобный по природе ангелам» «**Հոգին**, - ասում է Սբ. Հովհաննես Դամասկոսը, *մարմին* բառը կապելով միայն տեսանելի նյութի հետ, - **կենդանի էություն է, պարզ և անմարմին; անտեսանելի, ըստ իր բնության, մարմնական աչքերի համար, անմահ, խելքով ու բանականությամբ օժտված, առանց որոշակի կազմվածքի**: Նա գործում է օրգանական մարմնի հետ և նրան կյանք է հաղորդում, աճ, զգացում և ծննդյան ուժ: Միտքը հոգուն է պատկանում, և ոչ թե որպես նրանից տարբեր մի բան, այլ որպես իր ամենամաքուր մաս»:

Եվ մի փոքր ներքևում ավելացնում է. «**Հոգին ստեղծված էր մարմնի հետ միասին և ոչ այնպես, ինչպես Օրիգենն է դատարկախոսում, թե սկզբից հոգին էր ստեղծված, իսկ հետո մարմինը:**»

Св. Иоанн Дамаскин. *Точное изложение православной веры.*— Москва, 1992. или "Полн. собр. творений" Св. Иоанна Дамаскина, 1913 года. Т. 1 Книга 2-ая, гл. 12 «О человеке» «*Душа есть сущность живая, простая и бестелесная, невидимая, по своей природе, телесными очами; бессмертная, одаренная разумом и умом, не имеющая определенной фигуры, она действует при помощи органического тела и сообщает ему жизнь, возрастание, чувство и силу рождения. Ум принадлежит душе, не как что-либо другое, отличное от нее, но как чистейшая часть ее самой.*» «*Душа была создана вместе с телом, а не так, как пустословил Ориген, будто сначала была сотворена душа, а потом тело.*»

Վերևը մենք արդեն տեսանք, որ հենց Օրիգենն էր ճշմարիտ այս հարցում և ոչ թե Դամասկոսը, քանզի սկզբից Աստվածը ստեղծեց հոգին, հետո նրա «կաշվե զգեստը»:

Սակայն կան նաև այնպիսիները, որ համարում են, որ հոգին ձևավորվում է մահացո մարմնի մեջ:

Ակնհայտ է, որ այդպիսի կարծիքը բնագրի անունկնդիր վերլուծության հետևանք է:

Ինչևէ: Պարզ է, որ Ուղղափառ եկեղեցին, մարդու հոգին, ինչպես նաև հրեշտակներին դիտում է որպես որևէ ձև չունեցող ոգիներ, չպարզաբանելով, թե այդ դեպքում ինչն է նա տարբերվում ոգուց: Իսկ ձևի տակ միայն ու միայն նյութական մարմինն է հասկանում, այսինքն՝ միսը (**ժօրօ-ն**) իր արյունով հանդերձ, կամ այլ կերպ ասած, «կաշվե զգեստները»: Այս առումով նա հավատում է, որ լիարժեք անձը բաղկացած է *ոգուց* և *հոգու* հետ հավերժական կապ ունեցող *նյութական մարմնից*:

«Սուրբ հայրերը, - գրում է, օրինակ, Իլարիոն եպիսկոպոսը (Ալֆենը) իր «Հավատի հաղորդությունը» աշխատության մեջ, - «Աստվածաշնչի հիման վրա ուսուցանում են, որ հոգին և մարմինը խորթ տարրեր չեն, միավորված անհատի մեջ միայն որոշակի ժամանակով, այլ տրված են միաժամանակ և հավերժ հենց արարչության գործողության ժամանակ. հոգին «նշանված» է մարմնին և անբաժան է նրանից: (...) Միայն այն էակն է մարդ կոչվում, որը բաղկացած է երկուսի համադրությունից: «Հոգու և մարմնի անլուծելի կապը Սուրբ Գրիգոր Նյուսացեցին անվանում է «ծանոթություն», «բարեկամություն» և «սեր», որոնք պահպանվում են նույնիսկ մահից հետո. «Հոգու մեջ նույնիսկ իր մարմնից բաժանվելուց հետո որոշ նշաններ են մնում, միացումներ ... չէ որ դրախտում հարուստն ու Լազարոսը միմյանց ճանաչեցին: Մարմնի մի դրոշմ մնում է հոգու վրա, և նորացման ժամանակ նա նորից կնդունի նույն մարմինը»:

"В душе и после разлучения с телом остаются некие знаки... соединения, ведь узнали богатый и Лазарь (друг друга) в раю. На душе остается как бы отпечаток (тела), и во время обновления она опять примет на себя это (тело)." «Епископ Иларий (Алфеев) *Таинство веры. Введение в православное догматическое богословие. Глава V. Человек. Душа и тело. Православие и современность. Информационно-аналитический портал Саратовской епархии Русской Православной Церкви.* <http://lib.eparhia-saratov.ru/books/09i/ilarion/tainstvo/26.html>

Չխոսելով այն մասին, որ այդ «որոշ նշանները» և նյութական մարմնի նորացումը ակնհայտ հորինվածքներ են, որ հավակնում են ծածկել անընթացողության ճեղքը այդ հարցում, բոլոր այդ նկատառումները ենթադրում

են նաև երկրային ամուսնության մասնակցություն մարդու արարման գործում ի հակառակ մարգարեների (Ես 54: 1 կամ 56: 3-5, կամ Իմաստ 3: 13-14), Քրիստոսի և առաքյալների կուսությանը վերաբերող ուսմունքներին: (Հովի 1: 13-14, 1Պեղր 1: 23)

Ուստի Ուղղափառ կատեխիզմը, հարության մարմինը նույնացնելով ոչ թե հոգու անտեսանելի մարմնի հետ, այլ տեսանելի նյութական մարմնի հետ, ասում է. «Հարությունը հոգին նոր մարմին հագնելու մեջ չէ: Ըստ էության, դա կլինի նույն մարմինը, որը ուներ մարդը այս կյանքում»: Поэтому о теле воскресения в Православном катехизисе сказано: «Воскресение не есть облечение души в новое тело, по существу это будет то же самое тело, каким человек обладал в этой жизни», Православный катехизис, часть 2-ая, 1.2. Тожественность тела воскресшего телу живущего. http://azbyka.ru/dictionary/10/davydenkov_katihizis_17-all.shtml

Այս մեկնաբանության սխալի մասին ուղղակիորեն վկայում է մարգարե Եսայան, խոսելիս «փրկության հանդերձների» մասին, որոնց դեռ կանդառադառնամ այստեղ:

Իսկ Հիերոնիմոսը Սերաֆիմը (Ռոուզ), իր Ուղղափառ հավատքի ամփոփագրում մեջբերում է Հովհաննես Դամասկոսի հետևյալ խոսքերը՝ պարզաբանելով, որ խոսքը հենց մսի և արյան մասին է. «... իսկապես կլինի, կլինի մեռելների հարություն: Բայց հարության մասին խոսելով՝ մենք պատկերացնում ենք մարմինների հարությունը: Քանզի հարությունը: դա ընկածի երկրորդական կանգնեցնումն է: Իսկ հոգիները, լինելով անմահ, ինչպե՞ս են հարություն առնելու: Քանզի եթե մահը սահմանվում է որպես հոգու անջատումը մարմնից, ապա հարությունն, իհարկե, հոգու և մարմնի նոր միացումն է և նոր կանգնեցնումը հանգուցալուծված և մահացած կենդանի էակի: Այսպիսով, մարմինը ինքնին, որ քայքայվում է և հանգուցալուծվում է, հարություն կառնի անփուտ: Քանի որ Նա, ով սկզբում նրան արտադրեց երկրի փոշուց, կարող է նորից հարություն տալ այն բանից հետո, երբ նորից, Ստեղծողի խոսքի համաձայն, նա հանգուցալուծվեց և վերադարձավ այն հողի մեջ, որից վերցված էր (sic) ... » «...истинно будет, будет воскресение мертвых. Но, говоря о воскресении, мы представляем себе воскресение тел. Ибо воскресение есть вторичное воздвижение упавшего; души же, будучи бессмертными, каким образом воскреснут? Ибо, если смерть определяют как отделение души от тела, то воскресение есть, конечно, вторичное соединение души и тела, и вторичное воздвижение разрешившегося и умершего живого существа. Итак, само тело, истлевающее и разрешающееся, оно само воскреснет нетленным. Ибо Тот, Кто в начале произвел его из праха земли, может снова воскресить его, после того, как оно опять, по изречению Творца, разрешилось и возвратилось назад в землю, из которого (sic) было взято...» [Православие и современность. Информационно-аналитический портал Саратовской епархии Русской Православной Церкви.](#) Электронная библиотека. Иеромонах Серафим (Роуз). Душа после смерти. X. Краткое изложение Православного учения о посмертной судьбе души. Воскресение тела.

Այսպիսով, կարող ենք հաստատել. Չնայած նրան, որ Ուղղափառ Եկեղեցին ճիշտ է թարգմանել *հոգին* ու *Ոգին*, արդյունքը նույնն է, իր նույն աստվածաբանական սխալով, ըստ որին ստացվում է նախ և առաջ, որ *հոգու* և *ոգու* միջև հստակ տարբերություն չկա, քանի որ երկուսն էլ հասկացվում են որպես *ոգի*: (Անհեթեթություն): Եվ երկրորդը, անհասկանալի է, թե ինչ մարմին է հարություն առնելու, եթե առաքյալի խոսքով՝ «*արյունն ու մարմինը չեն կարող*

ժառանգել Թագավորությունը»: (1 Կորնթ. 15:50): Ինչպե՞ս կարող է լինել նույն նյութական մարմինը, որը, չունենալով ոչ արյուն, ոչ միս, նաև առանց սեռի է լինելու, քանի որ Հիսուսն ասել է. *«Երբ նրանք հարություն առնեն, այդ ժամանակ նրանք ոչ էլ կամուսնանան և ոչ էլ ամուսնանալու են,* ավելի լավ թարգմանությունը այստեղ կլինի Սան Պաոլոյում տպագրված Նոր կտակարանի տարբերակը, որ ասում է. «ոչ կին կառնեն, ոչ էլ երկան կտրվին»։ *բայց նրանք երկնքում հրեշտակների պես կլինեն»* (Մարկոս 12:25), որ անսեռ են:

Այստեղ աստվածաբանների *«մարմին»* հասկացության սխալ ընկալումը բավականին ակնհայտ է: Կրկենք, որ մարդու իրական մարմինը իր նյութական մարմինը չէ, այլ *հոգին* է, անտեսանելի մեզ համար մեր հոգևոր անոթը, և նա պիտի հարություն առնի, այսինքն՝ ազատվի իր *«կաշվե զգեստներից»*, քանզի Աստծո թագավորությունը *հոգիների* թագավորություն է, և Ոգին, «ամուսնանալով» հոգու հետ՝ սերմանում է նրա մեջ նոր, *«փրկության»* մարմին, այսինքն՝ տալիս է նրան նոր, *«փրկութեան հանդերձներ»* (Եսայ 61: 10), քանզի այս վերջիններն են ներկայացնում երկրորդ, Աստված դարձած, Ադամի նոր մարմինը:

Չնայց որ կան նաև եկեղեցական հայրեր, որ չեն համաձայնվում վերևը բերված ընդհանուր մեկնաբանության հետ, օրինակ Իգնատիյ Բոյանչանինովը, հաստատված վարդապետությունը մնում է նույնը: Դա, փաստորեն, այն քանդիչ տուրքն է, որ Եկեղեցիները տվել են այս աշխարհի Իշխանին իրենց գոյությունն այստեղ պահպանելու համար:

Նույն ձևակերպումներն և նույն թերահասկացումը տեսնում ենք նաև **Կաթոլիկ Եկեղեցու** մեջ, որը նույնպես, ի հակառակ Սուրբ Գրքի և մոռանալով, որ *«երեւոդները ժամանակաւոր են, իսկ չ'երեւոդները յաւիտենական»* (2 Կոր 4: 18), ասում է. *«Հոգին դա ոգի է, որը չունի նյութական սուբստանցիա, որ ունի մարմինը. նա տեսանելի չէ և շոշափելի չէ: Բայց մարմնի հետ միասին, որին կենդանացնում է, նա կազմում է մարդկային էությունը (...) Կատեխիզմը սովորեցնում է, որ հոգին անմահ ոգի է ... նա նյութական չէ և չունի տարածական չափ»:*

“El alma es un espíritu que no tiene sustancia material como el cuerpo; no puede verse ni tocarse. Y junto con el cuerpo que efectivamente es lo que lo anima, constituye al ser humano... El catecismo enseña que el alma es un espíritu inmortal... es inmaterial y no tiene cantidad de extensión” Alma: significado, definición en el catolicismo: <http://religioncatolicaromana.blogspot.com.ar/2013/01/alma-significado-definicion-en-el.html>

«Ըստ էության, նա կախված է մարմնից»:«(...) No es extenso, corpóreo, y es esencialmente e intrínsecamente dependiente del cuerpo. (...) »(Enciclopedia católica. en cuerpo y alma ”<http://religioncatolicaromana.blogspot.com.ar/2013/01/alma-significado-definicion-en-el.html>

Այդպիսի սխալ մեկնաբանությունները, ինչպես ասացի, կապված են Աստվածաշնչի հատվածային ուսումնասիրման հետ և, փաստորեն, նյութապաշտության ակնհայտ դրսևորումներ են:

Ինչպես տեսնում ենք, երկու եկեղեցիներում էլ նշված հասկացությունները հիմնականում համընկնում են: Նույնը կարելի է ասել հայ Եկեղեցու մասին:

Ստացվում է, որ մարդն ունի մեկ մարմին և մեկ *ոգի*, քանի որ եկեղեցիները հոգին համարում են *ոգի*: Եթե երկուսն էլ մեկ նշանակություն ունեն և եթե

հոգին կախված է նյութական մարմնից, ապա դա նշանակում է, որ նյութական մարմնին առաջնային նշանակություն է տրվում: Եթե *Πνεύμα-ն* և *Ψυχή-ն* մեկնաբանվում են որպես անձն ոգի, ապա դրանց բնագրում նշված տարբերությունը անհերթ է թվում: Եվ հենց դրա վրա հիմնվելով՝ հայ Եկեղեցին այս պարագայում նախընտրել է «հոգի» բառը այդ երկու հասկացությունների համար:

Նկատի ունենալով մարդու մասին այսպիսի տեսակետը բացարձակապես զարմանալի չէ, որ Սուրբ Երրորդություն հասկացությունը, որի պատկերով է ստեղծվել մարդը, կամ համարվում է անհասկանալի (կաթոլիկների համար), կամ էլ սխալ ձևով է մեկնաբանվում: Այդ Ռուս Եկեղեցու սխալ մեկնաբանությունն էր, որ մեծ ռուս գրող Լեվ Տոլստոյին բերեց Սուրբ Երրորդության ժխտմանը:

Եվ քանի որ միանգամայն ակնհայտ է, որ այս ամենի հետեւում թաքնված է տեսանելի նյութական մարմնի պաշտամունքը, զարմանալի չէ նաև այն փաստը, որ եկեղեցիներում կա մատունքների զուտ հեթանոսական պաշտամունք և ցանկություն պահել դրանց անփուտ: Մինչդեռ Տերը ոչ մի կարևորություն չտալով մարդու տեսանելի մահացո մարմնին, ասում է Եսայիա մարգարեի շուրթերով.

«ամեն մարմին նման է խոտի, եւ մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի: Խոտը չորանում է, նրա ծաղիկը թափում, որովհետեւ նրա վրայ փչում է Տիրոջ շունչը: Արդարեւ, իմ այս ժողովուրդը նման է խոտի: Խոտը չորանում է, ծաղիկը թափում, բայց Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան:» (Եսա 40: 6-8)

Նույնը կրկնում է Պետրոս առաքյալը, ասելով.

«ամեն մարմին խոտի պէս է, եւ մարդի ամեն փառքը խոտի ծաղկի պէս. Խոտը չորացաւ եւ նորա ծաղիկը թափուեցաւ: Բսկ Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան. եւ սա այն խօսքն է, որ ձեզ աւետարանուեցաւ:» (1 Պետր 1: 24-25)

«Տիրոջ Խոսքը»՝ այն երկնքից իջաց *Հացն է* (Հովհ 6: 58), որով ամեն մի քրիստոնյա պիտի հագեցնի իր հոգին: Հենց այդ *Հացն է Ոգին (Քրիստոսը/Հաբեթը)*: Նա է կյանք տալիս: Նրանով սնվելու համար պետք չէ որովայն ունենալ, որը անհետանալու է: Ինչպես առաքյալ Պողոսն է ասում, *«Ուտելիքը որովայնի եւ որովայնը ուտելիքի համար է: Բայց Աստուած է՛ւ այս, է՛ւ այն պիտի կործանի. սակայն մարմինը ոչ թէ պոռնկութեան, այլ Տիրոջ համար է, եւ Տէրը՝ մարմնի համար»:* (1 Կոր 6: 13)

Այսինքն՝ ոչ թե նյութական մարմինն իր որովայնով է հարություն առնում, այլ հոգևոր մարմինը, որը սնվում է հոգևոր սնունդով՝ *«Տիրոջ Խոսքով»:*

Նույն հարցին անդրադարձել է նաև Հիսուսը: Նրա ակնարկի ճիշտ թարգմանությունը կլինի, ոչ թե *«Հոգին»* (Մեմր), ինչպես թարգմանված է հայերեն, այլ *«Ոգին է (Հաբեթը) կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող անել»:* (Հովհաննես 6: 64):

Իսկ մարմինն անկարող հայտարարելով՝ Հիսուսը այստեղ նկատի ունի միայն *արտաքին մարմինը (օձօք-ն)*, որ ոչ մի բան չի կարող անել:

Ասվածը պահանջում է վերանաել հայ աստվածաբանությունը, անկախացնելով նրան ընդհանուր մոլորանքից: Բայց այդ իրագործելու համար, բնականաբար, սկզբից պիտի Աստվածաշնչի թարգմանությունը սրբագրվի: Եվ ոչ միայն վերևը նշված վրիպումների համար, այլ նաև ուրիշ կարևոր բացթողումների համար, որոնցից մեկի մասին կխոսեմ հաջորդ հոդվածում:

Արամ Պաղղամ և Արամ Նախարայիմ

Ակնարկված բացթողումների մասին խոսելուց առաջ հիշենք Հին կտակարանի գլխավոր «բնագրերը», որ *Մեպտուազինտան* է (հունարեն թարգմանությունը հեբրայերենից, կատարված 3-2-րդ դարերում մեր թվարկությունից առաջ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում 70 ուաբիների կողմից) և *Մասորետական տեքստը*, որ հին հեբրայերեն տեքստի փոփոխված տեսակն է, ստեղծված մեր թվարկության 1-2 դարերում հրեաների քրիստոնեության դեմ թեժ պայքարի ժամանակ: Այդ պատճառով երկու հիմնական տեքստերը տարբերվում են իրարից: Այնուամենայնիվ Աստվածաշնչի բուն իմաստը հասկանալու համար երկուսն էլ հարկավոր են, քանզի, եթե մտքի առումով ավելի հավաստի է մեզ համար Մեպտուազինտան, տեղանունների առումով ավելի ճշգրիտ է Մասորետական տեքստը: Տեղանունները շատ մեծ նշանակություն ունեն, որովհետև դրանք լոկ տեղանուններ չեն, այլ դրանցից ամենը պարունակում է իր մեջ մի թաքնված իմաստ Աստծո Խոսքի, կապված արարչության հետ: Իսկ թաքնված է այդ Խոսքը, քանզի վերաբերում է թաքնված հոգուն, որի համար և գրված է առակների ձևով: Իսկ մահկանացուն, եթե ուզում է հասկանալ այն պիտի սովորի առակների իմաստը գուշակել, քանզի Աստվածն ասել է Դավթի շուրթերով և կրկնել, տարբեր մարքարենների միջոցով.

«Ժողովուրդն է՛ր, ո՛րն է՛ր դարձրե՛ք իմ օրէնքներին, եւ մօտեցրե՛ք ձեր ականջները բերանիս խօսքերին: Առակով պիտի բացեմ բերանն իմ, սկզբից եւեթ առակներով պիտի խօսեմ» (Մաղմ 77: 1-2)

Այս բոլորը ասվեց նրա համար, որ հասկանալի լինի այն, ինչի մասին այստեղ պիտի խոսվի: Իսկ այժմ անցնենք նշված բացթողումներին, որ վերաբերում են Հին Կտակարանի հայերեն թարգմանությանը: Վերջինը կատարվել է մասնավորապես, Մեպտուազինտայի հիման վրա, համենայն դեպս դա վերաբերում է այն տեքստերին, որոնց կանոնադատանք այս հոդվածում:

Հատուկ չփնտրելով դրանց՝ նկատել եմ, որ հրեական տեքստի մի շարք տեղանուններ հայ թարգմանության մեջ չեն տրվել, ինչպես կան, այլ փոխարինվել են համընդհանուր ձևով համաձայնված մեկնաբանություններով: Օրինակ, Աբրամի հետ կապված Մասորետական տեքստի *Արամ Պաղղամ* կամ *Արամ Նախարայիմ* տեղանունը, Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ փոխարինված է ոչինչ չստող *«Միջագետք»* բառով:

Մինչդեռ այդ անունները մեծ հոգևոր նշանակություն ունեն: Այդ նշանակությունը հասկանալու համար, սկսենք Աբրամի հայրենիքից:

Ըստ հեբրայական *Մատթեոսական տեքստի*, Աբրամը **«Քաղղէացոց Ուրից»** էր: Երևի, այդ տեղանվանը նշանակություն չտալով՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանիչը *Ուր* տեղանունը փոխել է «երկիր» բառով, գրելով **«Քաղղէացոց երկրից»**:

«Թարան, - կարդում ենք Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, - *իր որդի Աբրամին, իր որդի Նաբորին, իր որդի Առանի որդի Ղովտին ու իր հարսին՝ իր որդի Աբրամի կնոջը, Քաղղէացոց երկրից առաւ տարաւ Քանանացոց երկիրը: Նրանք հասան Խառան ու բնակուեցին այնտեղ:*³²*Խառանում Թարան դարձաւ երկու հարիւր հինգ տարեկան. Թարան Խառանում էլ մեռաւ:*» (Ծննդ 11: 31-32)

Եվ այսպես է ոչ միայն այս հատվածում (Նաել, օրինակ, Նէեմ 9: 7)

Ինչու է հայ թարգմանիչը խուսափել բնագրի *Ուր* տեղանունը օգտագործելուց և ամենուրեք այն փոխարինել «երկիր» բառով: Բնավ, հասկանալի չէ, մանավանդ որ *Ուրը, Արի* խոտորումը լինելով՝ ուղղակի ձևով մեր լեռնաշխարհին է մատնանշում:

Միայն մեկ բացատրություն կարելի է տալ այս երևույթին: Դա **«Քաղղէացոց»** սահմանումն է, քանզի այդ հասկացությունը *Բաբելոնացիներին* են վերաբերում: Հենց այդ պատճառով գտնվեցին եկեղեցական հայրեր, որոնք Աբրամի հայրենիքը մեկնաբանեցին որպես չար հեթանոսների երկիր, որի կեղտերից Աստվածը հանեց Աբրամին: Բայց եթե այդպես էր, ինչու էր Աբրահամը պնդում, որ իր որդիները միայն իր ծննդավայրից պիտի իրենց համար կին վերցնեն:

Հարցը մնում է օղի մեջ կախված:

Հարկ է նկատել նաև, որ վերը ներկայացրած թարգմանությունից (եթե այն ենթատեքստից հանենք) կարող ենք հետևություն անել, որ *Խառանը*, ուր եկավ Թարան իր ընտանիքով հանդերձ, արդեն *Քանանացոց երկրում էր*: Սակայն այդ սխալից մեզ փրկում է 12-րդ գլխի հաղորդաբացությունը: Այդ նկատի ունենալով, օրինակ, ռուս թարգմանիչները այսպես են թարգմանել նույն հատվածը. Ոչ թե «տարավ Քանանացոց երկիրը», այլ **«որ գնա Քանանացոց երկիր, բայց հասնելով Խառան, բնակվեցին այնտեղ:»** Այդ «բայցը» ցույց է տալիս, որ ինչ-ինչ պատճառով նրանք չհասան *Քանանացոց երկիր*: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Թարայի մահից հետո Աստվածը նորից դիմեց Աբրամին, հորդորելով նրան գնալ *Քանանացոց* երկիր, ինչից հետևում է, որ *Խառան*-ը չի պատկանում վերջինին, այլ **Քաղղէացոց Ուրում** է գտնվում, կամ, ավելի ճիշտ, հենց նրան է խորհրդանշում:

Բայց այստեղ ուշադրություն դարձնենք *Խառան* տեղանունին: Հեբրայերեն նա հնչում է որպես *Հարան* | ܚܪܢ : Հետաքրքիր է, որ այդ քաղաքը ունի նաև ուրիշ երկու անուններ. *Պաղղան-Արամ* (հիշատակվել է Ծննդ 25: 20; 28: 2, 5-8; 31: 17-18; 33: 18; 35: 9, 26; 46: 15) և *Արամ Նախարայիմ* (հինգ անգամ է հիշատակվում), որ ներկա են հեբրայական *Մատթեոսական տեքստում* և այն թարգմանություններում, որ արված են այդ տեքստից: Նշված փաստը

ակնհայտորեն մեզ հուշում է, որ *Խառան*-ը (*Հարան/մ*-ը)՝ *Արամի* խտորված ձևն է:

Մակայն հայերեն թարգմանության մեջ (ինչպես նաև Սեպտուագինտայում) դրանց փոխարեն տեսնում ենք *Միջագետք* կամ *Ասորեստան*:

Այս վերջին երկու աշխարհագրական և պատմական անունները մեզ ոչ մի աստվածաշնչական հաղորդություն չեն տալիս: Բայց այն անունները, որ դրանք ունեն *Մասորեստական տեքստում*, անկասկած, անհայտ բնագրից են գալիս: Տեսնենք, թե ինչ են նշանակում:

Պաղդան-Արամը սովորաբար վերծանվում է որպես «*Արամյան ճանապարհ*», իսկ *Արամ Նահարայիմը*՝ որպես «*միջագետք*»: Առաջինը, ըստ երեւոյթին, բացատրվում է սանսկրիտի *padha* և *patha* բառերով: Դրանցից առաջինը նշանակում է «*ուղի*», իսկ երկրորդը՝ «*արահետ*», «*ճանապարհ*»: Բայց հասկանալի է, որ քաղաքն ինքնին չի կարող արահետ լինել, այն կարող է մի կետ լինել ճանապարհի վրա: Ի՞նչ կարող է նշանակել այս կետը: Եթե դա ուղի է, չի կարող ուղիղ իմաստով մեկնաբանվել, այլ միայն որպես հոգեւոր ուղի, որպես ուղեցույց: Այս կապակցությամբ կարծում եմ, որ նույն արմատից է ծագում նաև հայերեն *patgam* բառը «*ուխտ*», «*հրահանգ*» նշանակությունով, որը հնարավորություն է տալիս բացատրել *Paddam/n Aram*-ը որպես, օրինակ, «*Արամի ուսմունք*», կամ «*Արամի պատգամ*»:

Մյուս կողմից, քաղաքը՝ փակ տարածք է նշանակում, նշված ուղու ելակետ: Դրա հիմքում են, ինչպես երևում է, հայերեն «*պատ*» և ավեստական «*daman*»-ը, որը բացատրվում է որպես «*բնակավայր*», «*արարչություն*», «*ստեղծում*»: Միասին, երկու արմատները, օրինակ, *pattun*-ի ձևով, հայերենում կարելի է մեկնաբանել որպես «*պատերով ցանկապատված տուն*»: Այսինքն՝ *Պաղդան Արամը*, որպես ամբողջություն, կարելի էր հասկանալ որպես «*Արամի պարսպապատ տուն*», ստեղծագործական (արարչական) ուսմունքի ելակետ, կամ Հավիտենապես ապրողների տուն, որտեղից կյանքի լույսն է տարածվում:

Այստեղից հասկանալի է դառնում Աբրահամի ուխտը որդիներին՝ միայն իրեն հարազատ արամեացիներից կին վերցնել իրենց համար, այսինքն՝ ամենամաքուր աղբյուրից:

Հիմա տեսնենք, թե ինչ է թաքնված *Արամ Նահարայիմ (Aram Naharaim)* անվան տակ:

Երբ Աստվածաշունչը, խոսելով *Խառանի (Haran)* մասին, շեշտում է, որ սա «*Նաբորի քաղաքն*» է, ապա հեբրայերեն տեքստում քաղաքի երկու անունների փոխարեն օգտագործվում է երրորդը, այսինքն՝ *Արամ Նահարայիմը*: Ներքևը բերում եմ դրա օրինակներից մեկը:

«*Ծառան առաւ իր տիրոջ ուղտերից տասը ուղտ եւ գնաց իր հետ ունենալով իր տիրոջ բոլոր բարիքներից: Նա ելաւ գնաց Միջագետք, Նաբորի քաղաքը*»: (Ծննդ 24: 10)

Իսկ ահա, թե ինչպես է նույն հատվածը ներկայացված հեբրայերեն տեքստից թարգմանություններում, - այս դեպքում, իսպանական թարգմանությունում.

«Tomó el siervo diez camellos de los de su señor y de las cosas mejores de su señor y se puso en marcha hacia **Aram Naharáyim, hacia la ciudad de Najor**»:

Այստեղ նույն Արամը սահմանված է որպես *Նաքորի* քաղաք:

Միանգամայն ակնհայտ է, որ *Նաքոր* և *Նահարաիմ* բառերը մեկ արմատ ունեցող խոտորումներ են: Համարվում է, որ *Նաքորը* նշանակում է «խոնկոց, հյեղակացող»: [Տե՛ս Անվան ցուցակը Ռուսական սինոդական Աստվածաշնչի վերջում (Բրյուսել, 1983 թ.)]:

Սակայն հասկանալի է, որ այս բացատրությունն անիմաստ է, քանի որ ոչ մի տրամաբանական կապ չունի հաղորդվածի հետ, և առավել ևս, որ *Նաքոր* անվան համար հայերեն լեզվում կա իւելամիտ բացատրություն, որը «*նախորդ*» բառն է: Ինչպես գիտենք, *h*, *p*, *ju* ձայները խոտորվում են, ինչի պատճառով, օրինակ, ռուսերեն այդ անունը հնչում է որպես *Նախոր*) Վերջնական «դ» -ն խլացված է, իսկ վերջին խլացված հնչյունների կտրումը տարածված է շատ լեզուներում: Այնպես որ, միանգամայն ակնհայտ է, որ «*Նաքոր*» և «*Նախորդ*» բառերը նույնական են և՛ իմաստով, և՛ հնչումով, չնայած որ ներկայացված են երկու տարբեր լեզուների ֆոնետիկական նորմաների համաձայն:

Ինչ վերաբերում է *Նահարաիմ*-բառին, դա, ըստ օգտագործված իմաստի, նույն հայկական «*նախահայր*» բառից է ստեղծվել: Այսինքն՝ նույն *Նաքոր* սահմանված բացատրական ձևն է: «*Այիւ*» վերջավորությունը, մի կողմից, հեբրայերենում հոգնակի թվի վերջավորություն է, որը ցույց է տալիս, որ խոսքը ոչ թե մեկի, այլ շատ նախահայրերի մասին է, իսկ մյուս կողմից, եթե վերջնական «*ւ*» -ի փոխարեն նրա հետ խոտորվող «*ն*» հնչյունը դնենք, ապա ստանում ենք հայկական «ային» վերջածանցը, որը պատկանելություն է ցույց տալիս: Այնպես որ «*նահարայիւ*»-ը կնշանակե «*նախահայրական*»: Այստեղից է գալիս և հայերեն «*նախարար*» բառը, որը սահմանում է խոշոր ֆեոդալի, հողատերի: Բառացիորեն այն կարող էինք թարգմանվել նաև որպես «*առաջին հերկող*», «*առաջին ստեղծող*», քանի որ «*արար*» նշանակում է «*հերկել*», «*ստեղծել*»: Ապա *Արամ Նահարայիմը* կարելի կլինի բացատրել որպես «*Նախահայր Արամ*», կամ «*Արամ առաջնահերկող*», կամ «*Արամ առաջնաստեղծող*», ինչը հիանալիորեն համընկնում է նրա պատկերի տրամաբանության հետ:

Սակայն *Նաքոր* բառը ածական լինելով՝ որպես սեփական անուն է ընկալվում Աստվածաշնչի մեզ հասաց տեքստում: Դրա պատճառը այն է, որ, ինչպես դա ցույց են տվել իմ արդեն նշված այստեղ «Шесть дней творения и Седьмой день» ռուսերեն և իսպաներեն լեզվով գրված գրքում, երբ բառի իմաստը անհայտ էր հրեաների համար, նրանք կամ թողում էին այն այնպես, ինչպես կար, կամ էլ փոխում էին իրենց մեկնաբանություններով: Այսպես ածականները (ինչպես այս դեպքում) շատ հաճախ կարող էին սեփական անուն դառնալ և այդ սխալը՝ տարածվել Աստվածաշնչի ամբողջ տեքստով:

Բացի այդ, *Նաքոր* բառն, որ կարող է արտասանվել նաև ինչպես *Նահոր*, արդեն իր հերթին վկայում է, որ խոսքը գնում է ոչ թե ամբողջ, այլ՝ հյուսիսային Միջագետքի մասին, քանի որ նրա արամեական հնչյունը՝ *Նահրահինը*, համապատասխանում է *Նահրիի* շրջանի անվանը, որը նաև հայտնի է *Նահրի*,

Նարի, Նիհրիա անուններով, որ, ինչպես պարզվում է, նախահայր բառի կրճատված ձևերն են: Հետաքրքիր է նաև, որ արամերենում դրանց իմաստը շատ մոտ է *Արամ* անվան իմաստին, քանի որ *Նա, Նհուրա*՝ արամերեն նշանակում է «լույս», իսկ *Նահրա, Նուհրա* նշանակում է «հոգոց», «շունչ», ինչը մեզ հուշում է, որ այդ անունները *Աստծո լուսեղեն Ոգուն* են վերաբերում:

Ինչպես հայտնի է, *Նահրին՝ Վանա լճի* շրջակայքում գտնվող երկիրն է, (այսինքն՝ Արարատյան լեռնաշխարհի (այժմ Թուրքիային պատկանող) մասն է, որը նաև *Ուր* է կոչվում, կամ *Ուրարտու*, կամ *Արամ*:

Ասածի հիման վրա պարզ է դառնում, որ թե լեզվաբանական, թե աստվածաշնչական տեսակետից Աբրամի ծննդավայր *Ուրը՝ նույն Խառան (Haran) «քաղաքն» է, նույն նախահայրերի երկիր Արամը, կամ Նահրին, կամ Ուրարտուն:* Այս «հումանիշների» հնչական տարբերությունը պարտական է տարբեր լեզվական շերտերի, որոնց միջով անցել է Աստվածաշնչի տեքստը: Այլ կերպ ասած, Արամը ցուցանում է այն հոգևոր կետը, որտեղից էին բոլոր նախահայրերը: Հավանական է, որ դա *Արարատյան լեռնաշխարհի* նույն *Լուրար* լեռան գագաթն է խորհրդանշում, որտեղ, ըստ ներքևվր նշված պարականոն գրքի, «ննջել» են բոլոր Աստվածաշնչական հայրերը.

«Եվ Նոյը, - ասված է այնտեղ, - ննջեց իր հայրերի հետ. և թաղվեց Արարատի երկրում՝ Լուրար լեռան վրա» (գլուխ 10) [[\[ВЕТХОЗАВЕТНЫЕ АПОКРИФЫ , Книга Юбилеев - http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm\]](http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm)], այսինքն, ինչպես ցույց է տալիս այդ բառի արմատական իմ վերլուծությունը՝ «գանգատեղում»: [Մանրամասը նաեւ իմ «Նախագիծ: Հայաստանի նոր դպրոցների և ԲՈԲԷ-երի քրիստոնեական գաղափարադաստիարակչություն՝ հիմնված Գ. Նժդեհի ուսմունքների վրա» գրքի «Մեր հողը - Արարատյան լեռնաշխարհ՝ երկիր Աստվածաշնչական» գլխի Նոյին նվիրված մասում, կամ արդեն նշված իմ «Шесть дней творения и седьмой день.» (Буэнос-Айрес, 2013) գրքի Նոյին նվիրված մասում:]

Բայց տեսնենք, թե ո՞վ էր *Արամը* և որքանո՞վ է ճիշտ նրա անունը նույնացնել *Ասուրի (Ասորեստանի)* հետ, ինչպես դա տեսնում ենք Աստվածաշնչի հունարեն և հայերեն թարգմանություններում: Մեկ օրինակ բերեմ:

Ծննդոցի հետևյալ տեքստի հայերեն տարբերակում կարդում ենք.

«Եւ Իսահակը քառասուն տարեկան էր, երբոր Միջագետից ղ Ասորի Բաթուելի աղջիկ՝ Ասորի Լարանի քոյր Ռեբեկային իրան կին առաւ»: (Ծննդ 25: 20)

«Միջագետքը» տեսնում ենք հունական և ռուսական սինոդի թարգմանություններում, բայց դրանցից վերջինում *ասորուն* փոխարինել է *արամեացին*:

«Исаак был сорока лет, когда он взял себе в жену Ревекку, дочь Вафуила Арамеянина из Месопотамии, сестру Лавана Арамеянина» (Быт 25: 20).

Իսկ այ այս նույն հաստվածի իսպանական տարբերակը ճշտում է.

«Tenía Isaac cuarenta años cuando tomó por mujer a Rebeca, hija de Betuel, el arameo de Paddán Aram, y hermana de Labán el arameo». (Ծննդ 25: 20)

Ինչպես տեսնում ենք, հունական, հայկական և ռուսական թարգմանություններում *Պաղղամ Արամի* փոխարեն «Մեսոպոտամիա» է գրված,

այսինքն՝ «Միջագետք», իսկ հայկական թարգմանությունը, բացի դրանից, հետևելով Սեպտուագինտային, «արամեացուն» որպես «ասորի» է ներկայացրել:

Ակնհայտ է, որ Պատրիկան Արամը որպես Միջագետք թարգմանելը՝ հոգևոր հասկացությունների պատմանյութական ընկալման և մեկնաբանության հետևանք է: Նույնը վերաբերում է *արամյանին* որպես *ասորի* թարգմանելուն:

Որ հասկանանք, ինչ մեծ սխալ է թաքնված այդպիսի թարգմանության մեջ, տեսնենք թե ո՞վ է Արամը և ո՞վ է Ասուրը, Ասորեստանի հիմնադիրը:

Եթե նյութական աշխարհի պատմությունը նույնացնում է այդ երկուսին, ապա հոգևոր իրականությունը ամբողջովին այլ է:

Ինչպես Արամը, այնպես և Ասուրը Նոյի որդիների տոհմաձառերում են առաջին անգամ հայտնվում: Սակայն այդ տոհմաձառերից որի՞ն է պատկանում դրանցից ամեն մեկը, ստույգ չէ մեզ հասաց Աստվածաշնչական տեքստում և կասկածների տեղիք է տալիս:

Օրինակ, Ասուրը Աստվածաշնչում ներկայացված է համ Սեմի, համ էլ Քամի տոհմաձառերում: (Ծննդ 10: 11, 22) Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աստվածը Խոսքով է արարում և չի կարող նույն Խոսքով երկու տարբեր բաներ ստեղծել, պարզ է դառնում, որ այստեղ Աստծո Խոսքը խեղաթյուրված է մարդու կողմից: Եվ այժմ իրականությունն իմանալու համար առանձին հետազոտություն է հարկավոր:

Ինչ վերաբերում է Արամին, Աստվածաշունչը, կարծես թե, նրան Սեմի տոհմաձառին է կցում, սակայն միայն Ծննդոցի 10-րդ գլխում, որտեղ Սեմի հետնորդները ուղղակի թվարկված են առանց հերթականության: Բայց այ 11-րդ գլխում, որտեղ նրանք հորից որդի են դասավորված, Արամը բացակայում է: Այսպես, ակնհայտ է դառնում մարդու միջամտությունը Սուրբ Գրքի տեքստի մեջ:

Առհասարակ Արամը (ինչպես նաև Արարատյան լեռնաշխարհը) սակավ անգամ է հիշատակված Աստվածաշնչի մեզ հասաց տեքստում, որը բնավ բնագիր չէ: Թվում է, որ այդ անունը ամեն ձևով ցանկացել են ջնջել, մոռացության տալ կամ նվաստացնել նրա նշանակությունը:

Բայց բարեբախտաբար, Մովսես Խորենացու գտած ավելի հին բնագրից ծագող մի աղբյուրից պարզվում է, որ Արամը Հաբեթի հետնորդն է եղել, ինչը գերազանցապես համապատասխանում է նրա Աբրահամի հետ կապին:

Ինչպես գիտենք, Մովսես Խորենացին Նոյի երեք որդու տոհմաձառերը ներկայացնում է հորից որդի և մեկը մյուսից հետո: Ապա իր զարմանքն է հայտնում, գտնելով, որ բոլոր որդիների հետնորդների թիվը համընկնում է, այսինքն՝ հավասար է տասի: Այդ փաստը ստիպեց ինձ տեղադրել որդիների տոհմաձառերը հորիզոնական կարգով, որը աչքիս ներկայացրեց մի հրաշալի պատկեր:

<u>Սեմ</u>	<u>Քամ</u>	<u>Հաբեթ</u>
Արփաքսաթ	Քուշ	Գամեր

Կայնան Սաղա Եբեր	Մեսորայիմ Նեբրովթ Բար	Փիրաս Թորգոմ Հայկ
Փաղեկ	Աներիս	Արամանյակ
Ռագավ	Աբել	Արամայիս
Սերուք	Քայադ	Ամասիա
Նաքովր	Աբել	Գեղամ
Փաբա	Նինոս	Հարմա
Աբրահամ	Նինուաս	Արամ

Չնայաց նրան, որ այստեղ ևս շատ անուններ կասկածելի են թվում, ստեղծված շարքերից երկուսի ճշտությունը ապացուցվում է նրանց կազմող անձերի պատմություններով: Դրանք Հայկի և Արամի շարքերն են: Ինչպես տեսնում ենք, ըստ ստեղծված պատկերի, *Հաբեթական Հայկին* համապատասխանեց *Քամյան Բարը*, որ նույն *Բաբելն* է, կամ *Բելը*, ^[Մանրամասը նայել իմ «Նախահայր Հայկի մասին ավանդության Աստվածաշնչական արմատները» Բուկնոս Այրես 2019] և *Սեմյան Եբերը*: Իսկ *Հաբեթյան Արամին*, համապատասխանեցին *Քամյան Նինուասը*, և *Սեմյան Աբրահամը*, որն Աստվածաշնչական *Եբերի* որդիներին է դասվում: (Մատթ. տ, Ծննդ 14: 13)

Նկատի ունենալով նախորդ հոդվածում բերված Նոյի խոսքերը՝ պարզ է դառնում, որ *Հաբեթի* հետնորդներ *Հայկն* ու *Արամը* նույն *Հաբեթի Սուրբ Ոգու* տարբեր դրսևորումներն են ներկայացնում, իսկ *Քամյան Բարն* ու *Նինուասը*՝ նույն *Քամի* տարբեր դրսևորումները, այսինքն՝ այն անմաքուր ոգիները, որոնց դեմ պայքարում են *Հայկն* ու *Արամը*: Եվ այդ պայքարը համապատասխանաբար *Սեմյան Եբերին* և *Աբրահամին* տիրանալու համար է: ^{[Նայիր նախորդ հոդվածում ներկայացված Նոյի որդիների առեղծվածը]:}

Բացի դրանից, հետաքրքիր է, որ *Եբերը* նա է, ում *Հայկը* բարձրացրեց *Արարատյան լեռնաշխարհի*, որ Աստծո հոգևոր աշխարհի խորհրդանիշն է Աստվածաշնչում, և ում իր անունը տվեց: Հետևաբար, իրական *Եբերին* կարելի է *Հայյան*, կամ *Հայրյան*, անվանել (նույնն է *Եհովյան*, կամ *Յահվեյան*), այսինքն՝ *երկնային Ոգու* կրող:

Իսկ *Աբրահամը*՝ նա էր, ով Աստծո հրամանով իջավ այդ լեռնաշխարհից Աստծո Խոսքն ու հավատը սերմանելու *Քանանյաց երկրում*, որը չենք սխալվի նաև *Բաբելոն* անվանելով, քանզի դա այն աշխարհի խորհրդանիշն է, որ ստեղծվեց դրախտի դիմաց մեղք գործած Ադամի համար:

Այս տեսակետից հասկանալի է դառնում, ինչու՞ է *Մասորետական տեքստը* Աբրահամին Եբերի ցեղին վերագրում: (Ծննդ 14: 13) (հայկական և հունական տեքստում այդ փաստը բացակայում է, սակայն ռուսականում՝ ներկա է) և ինչու՞ է նույն *Մասորետական տեքստը* և ռուսական ու իսպանական թարգմանությունները նրան «*արամյան*» անվանում (Երկր. Օրենք 26: 5). *странствующий арамеянин* և *arameo errante*. Դժբախտաբար, հայերեն թարգմանությունը, բնավ, մտքափոխում է այս հատվածը, ներկայացնելով այն

հաջորդ ոչինչ չասող ձևով. «*Իմ հայրը թողեց Ասորեստանն ու իջաւ Եգիպտոս*»: (Երկր. Օրենք 26: 5)

Այսպիսի թարգմանությունը միայն ի ցույց է բերում թարգմանչի կողմից Սուրբ Գրքի պատմանյութական ընկալումը:

Դրանով հանդերձ տպավորություն է ստեղծվում նույնիսկ, որ հայերեն թարգմանությունը հայի թշնամու կողմից է ուղղերցվել, որը կոցկել է համարյա ամեն ինչ, որ բացահայտում կամ մատնանշում է ինչպես *Արարատյան լեռնաշխարհը*, այնպես էլ *Հաբեթի Սուրբ Ոգու* հետնորդներին: Բացի դրանից, ակնհայտ է, որ թարգմանիչը չի ընկալել Սուրբ Երրորդության առեղծվածը, չի հասկացել նաև թե, ինչպե՞ս է կարող *Աբրահամը* միաժամանակ համ Եբերի, համ էլ *Աբամի* ցեղից լինել: Նրա համար անհասանելի է մնում այն աստվածաշնչական փաստը, որ *Աբրահամի Եբերյան* հոգում *Աբամի* ոգին էր բնակվում: Հենց այդ պատճառով էլ Աբրահամը կոչվե՞ծ նաև «*արամյան*»: Այլ կերպ ասած, *Աբրահամի հոգին* «ամուսնացած» էր *Աբամի ոգու* հետ, ինչպես *Եբերի հոգին՝ Հայկի Ոգու* հետ: Երկուսն էլ՝ *Հայկն* ու *Աբամը՝* նույն *Հաբեթի Ոգու* տարբեր դրսևորումներն են, այսինքն՝ *Հոր Ոգուն* են ներկայացնում: Ուստի առակի մեջ նրանց անունները «*հայր*» բառից են ծագել:

Այսպիսով *Աբամ* անունը ոչ մի Աստվածաշնչական կապ չունի պատմական Ասորեստանի հետ: Մակայն կապ ունի Հայկի հետ:

Այժմ վերադառնալով *Աբամ* «քաղաքին», որի անվան վերլուծությունը, ինչպես տեսանք, նույնացնում է նրան Աստվածաշնչական *Ուրին*, հիշենք այն փաստը, որ հայերեն թարգմանության մեջ, *Ուրը* ուղղակի որպես «*երկիր*» է ներկայացվում, ինչը հեռացնում է մեր միտքը հյուսիսային Միջագետքից և ուղղերցում դեպի հարավային Միջագետք: Այդ պատճառով և *Քաղղեսցոց Ուրը* ժամանակակից աստվածաբանությունը կապում է Միջագետքի ամենահարավային հատվածում գտնվող մի քաղաքի հետ, որը *Ուրի* հետ նույնացրել են պայմանականորեն, քանզի այդ անփաստ տեղադրումը լոկ ենթադրություն է մարդու պատմական և ոչ Աստվածաշնչական մտքի:

Այնուամենայնիվ այդ անհիմն ենթադրությունը ընդունվեց բոլոր քրիստոնեական դավանանքների կողմից (իմիջայլոց, ինչպես նաև Սինայ թերակղզին որպես այն վայրը, ուր Մովսեսը բերեց Աստծո որդիներին): [Ժամանակակից աստվածաբանության մեջ համաձայնված է *Ուրը* տեղադրել այսօրվա Իրաքի հարավում՝ Եփրատ գետի բերանի մոտ, իր արևմտյան կողմից, այսինքն՝ փաստորեն, Պարսից ծոցի հարևանությամբ: Եվ, չնայց նրան, որ այդ կարծիքը շատ լուրջ հեքքողներ կան, դա այնուամենայնիվ ամրապնդվել է: Ավելի մանրամասը այդ հարցին ծանոթանալու համար, նաեւ իմ վերոնշված Նախագծի նույն «*Մեր հողը - Արարատյան լեռնաշխարհ՝ երկիր Աստվածաշնչական*» գլխի Աբրահամին նվիրված մասում, կամ արդեն նշված իմ «*Шесть дней творения и седьмой день*» գրքի համապատասխան գլխում:]

Ուրեմն ի՞նչ կատարվեց իրականում: Իսկ կատարվեց այն, որ *Քաղղեսցոց* բառին *բաբելոնականի* իմաստ տրվեց, այսինքն՝ *Քաղղեսցին Քամի* հետնորդների հետ կապվեց: Եվ այդ իմաստը ամրապնդվեց, ներխուժելով նույնիսկ Սուրբ Գրքի «սրբագրված» տեքստի մեջ:

Սակայն, բարեբախտաբար, գոյություն ունի շատ հին մի աղբյուր, որտեղ **Քաղղեացոց Ուրբ** այլ կերպարանքով է ներկայացված: Խոսքը գնում է Սիբիլայի Օռակուլների մասին, որ Աստվածաշնչի Հին Կտակարանի հնագույն պարականոն գրքերից է, որտեղ Սիբիլան, մասնավորապես, գրում է.

«Մի քաղաք կա (...) Քաղղեական Ուրի երկրում, որտեղից սերվում է մարդկանց ամենբարեպաշտ ցեղը՝ արդարացիորեն մտածող և միշտ զբաղված բարի գործերով: Նրանց, ճշմարտորեն, չեն մտահոգում արևի և լուսնի շրջանառությունը, ոչ էլ երկրի վրա կատարվող մեծ սխրագործությունները, ոչ էլ ծով-օվկիանոսի կապուտությամբ փայլող խորությունը: Նրանց չեն հետաքրքրում ոչ փռշտոցների մեկնաբանությունները, ոչ ավգուրների, գուշակների, կախարդների կամ հմայողների նախանշանները, ոչ էլ սզեստ որովայնախոսների խաբեությունները: Նրանք չեն նվիրում իրենց քաղղեացիների աստղագիտական կանխատեսումներին, [Սյս ակնարկով սիբիլան բաժանում է պատմականը հոգևորից:]

չեն ուսումնասիրում աստղագիտություն, քանզի այդ ամենը - այն, ինչ օրից օր հետապնդում են անմիտ մարդիկ, առանց վարժեցնելու իրենց հոգիները որևէ օգտակար գործում,՝ ըստ էության, մոլորություն է: Ճշմարտորեն, նրանք չնչին մահկանացուներին երկրի վրա սովորեցնում են միայն վնասակար մոլորություններին, որպեսզի նրանց հեռացնեն բարի ճանապարհից և արդար արարքներից: Բայց սրանք, ընդհակառակը, արդարության և առաքինության մեջ են վարժվում և շահ չեն փափագում՝ որ երկրի վրա անթիվ աղետների, պատերազմների ու անվերջ սովի պատճառն է: Նրանց քաղաքներում և գյուղերում տիրում է արդար զսպվածություն: Գիշերները միմյանց չեն թալանում, չեն տանում կովերի, ոչխարների և այծերի նախիրները, չեն խլում հարևանի սահմանամերձ հողերը: Հարուստները չեն ոտնահարում աղքատներին, չեն ճնշում այրիներին, այլ ավելի շուտ օգնում են նրանց, միշտ նրանց հաց, զինի և բուսական յուղ տրամադրելով: Հարուստը միշտ իր բերքի մի մասը ուղարկում է նրանց, ովքեր ոչինչ չունեն, կամ ովքեր աղքատացել են, որովհետև հետևում են մեծ Աստծո խոսքին, իրենց Հոր՝ երկրի ու երկնքի Արարչի պատվին: (...)

Կա մի թագավորական ցեղ, որի սերունդները չեն գայթակղվում, և որը ժամանակի դադարելուց հետո թագավորելու է և նորից կսկսի կառուցել Աստծո տաճարը: Պարսից բոլոր թագավորները ի նշան իրենց վասալության կողարկեն նրան ոսկի, բրոնզ և դժվար մշակվող երկաթ, քանի որ Ինքն Աստվածը նրանց վրա սուրբ գիշերային երազ կփռի, և այդ պահին տաճարը նորից կհայտնվի այնպիսին, ինչպիսին էր նախկինում:» [“Oraculos sibilinos” – Apocrifos del Antiguo testamento por A. Diez Macho, Tomo III, Libro III, p. 295-297]

Պարզ է դառնում, որ Աբրահամը այդ ցեղից էր: Նրա հոգևոր հայրենակիցներին է Սիբիլան անվանում **«սուրբ ցեղ գթասիրտ մարդկանց, որ կշարունակի իր գոյությունը հնազանդ բարձրագույն Աստծո կամքին և մտքին»:** [“Oraculos sibilinos” – Apocrifos del Antiguo testamento por A. Diez Macho, Tomo III, Libro III, p. 306]

Այդ նույն ցեղից էր Հիսուս Քրիստոսը և պատահական չէ, որ արամերեն էր խոսում, իսկ նրանք, ովքեր իրենց հրեա են կոչում, ասում են Հիսուսի մասին. «նա մեզնից չէր»:

Չնայաց նրան, որ Սիբիլայի հաղորդությունը հակառակ է համ այն պատկերացումին, որ աշխարհն ունի *քաղղեացիների* մասին, համ էլ Աստվածաշնչի, անշուշտ, խեղաթյուրված տեքստին, նույնը հավատալի է դառնում երկու պարականոն գրվածքների լույսի տակ, որոնցից մեկը Հիսուսին է վերաբերում, իսկ մյուսը՝ նույն Սիբիլային:

Դրանցից առաջինը՝ Փիլիփոսի ավետարանն է, ըստ որին, Հիսուսը ասել է.

«Երկրային բաներին տրված անունները մեծ մոլորություն են, որովհետև նրանք շեղում են սիրտը ամուրից դեպի անամուրը, և նա, ով լսում է «Աստված» բառը, ոչ թե ամուրն է հասկանում, այլ անամուրը:

Նույն ձևով «Հայր», և «Հոգի» և «Սուրբ Ոգի», «կյանք», «լույս», «հարություն», «եկեղեցի» և բոլոր մյուս բառերի մեջ ոչ թե ամուրն են ըմբռնում, այլ անամուրը, եթե, իհարկե, չեն ճանաչել այն, ինչ ամուր է: Լսված անունների գոյությունը աշխարհում խաբեության համար է: (...) Արքունները (ընկած հրեշտակները – հեղ.) ցանկացան խաբել մարդուն, քանի որ տեսան, որ նա իսկապես լավ բաների հետ նույն ծագումն ունի: Նրանք վերցրին լավերի անունը (և) սովեցին վատերին, որպեսզի նրան անուններով խաբեն և կապեն վատ բաների հետ: (...) Քանզի նրանք ուզում էին վերցնել ազատ մարդուն և հավիտյան իրենց ստրուկը դարձնել: (Առաքյալ Փիլիպ, 11-13)

Եթե լավ մտածենք, դա հասկանալի է և բնական, քանի որ փչացված Ադամը տեղադրվեց ստախոս Օձի ժամանակավոր աշխարհ, որտեղ ամեն ինչ *ստի* վրա է հիմնված, իսկ *ճշմարտությունը* հետապնդվում է, այսինքն՝ այնտեղ, որտեղ իմաստի փոխարում է կատարվել: Այսպիսով *Քաղղեացուց*՝ վատերի հետ են կապում, իսկ *Քամի* աշխարհ *Քանասնը՝ երկնային* են կոչում, բացահայտելով Նոյի որդի *Քամի* ցանկությունը իրենով անել և այսպիսով ստրկացնել ազատ *Սեմին*, ինչի համար և Նոյը անիծեց նրան, հրահանգելով, որ *Քամը* պիտի *Հաբեթի* և *Սեմի* ստրուկը լինի և ոչ թե հակառակը:

Նույն միտքը արտահայտել է նաև վերոհիշյալ Սիբիլան: Չնայաց այն բանին, որ նրա ներքևը ներկայացված խոսքերը Բլիոյի պատմությանն են վերաբերում, նրանք այնքանով են հետաքրքիր մեզ համար, որ ցույց են տալիս, թե ինչպես է գործում երկրի վրա Աստծո Խոսքի թշնամին և ինչպես են ընդհանրապես խեղաթյուրվում բնագիրները:

*«Ապագայում մի կեղծիքների գրող կլինի, - գրում է Սիբիլան, ակնհայտորեն Հոմերոսին նկատի ունենալով, - մի մահացու ծերուկ կեղծ ծագումով: նրա աչքերի լույսը կմարի: Նա մեծ բանականության տեր կլինի և իր բանաստեղծ խոսքը ներդաշնակ իր մտքերի հետ երկու անվան խառնուրդ կներկայացնի: (Էջ 302; գիրք III) (...) **նա առաջինը կլինի, որ կբացի հազարավոր գրքեր և այնուհետև կթարցնի դրանք և այլևս չի ցուց տա դրանց մարդկանց**»: (Էջ 365; գիրք XI) (...) Նա Բլիոյում պատահածի մասին կգրի, ոչ թե ճշմարտությամբ, այլ հստակ, քանի որ*

նա իրենով կանի իմ խոսքերը և իմ բանաստեղծությունները: (Էջ 302; գիրք III) (...)
«Նրա գրերի բովանդակությունը լի կլինի եռանդով և արտացոլանքով, և հմտությամբ, մերթ մի եղանակով, մերթ մեկ այլ կերպ, կկազմի անասելի բանաստեղծություններ՝ տիրապետելով իմ խոսքերին, երգերին և տողերին...»
և «ամեն տեսակ ստեր գրելով՝ կանի նաև, որ դատարկ գլուխներով տղամարդկանց պաշտեն որպես աստվածների» (Էջ 302; գիրք III)

Այս երկու հաղորդությունները ի ցույց են բերում այս աշխարհում իշխող սուտը, որ վերիվայր է արել հասկացությունների իմաստը, ինչի մասին վկայում է նաև Ժողովողը, ասելով.

«Յիմարին բարձր դիրք է տրուում, իսկ հարուստներին ^[անշուշտ, նկատի ունենալով հոգևոր հարստություն կրողներին] ցածր տեղ են նստեցնում: Ես ծառաներ եմ տեսել, որ ձի հեծած են շրջել, եւ իշխաններ, որոնք երկրի վրայ քայլել են ծառաների նման» (Ժող 10: 6-7)

Վերադառնալով Քաղդեական Ուրին, այսինքն՝ Ուրարտուին, կամ Արարատյան երկրին, տեղին կլինի հիշել Ուրարտուի գլխավոր Աստծու անունը, որով և Ուրարտուն Քաղդեական էր կոչվում: Դա Խալդին է, որը կարելի է արտասանել նաև ինչպես Քաղդի և որի անվան առաջին վանկը նույն Աստվածաշնչի Ել-ն է, որ Ալ-ի ու Ար-ի խոտորումն է ներկայացնում:

Չմոռանալով, որ խոսքը գնում է հոգևոր և ոչ թե պատմական իրողությունների մասին, նշենք, որ, հավանական է հենց այդ հոգևոր ցեղին ու երկրին են վերաբերում Թվոց գրքի հետևյալ բառերը.

«Լեռներից եմ տեսնում նրան, բլուրների բարձունքից եմ նայում նրան: Ահա կայ մի ժողովուրդ, որ առանձին պիտի բնակուի, ազգերի մեջ չպիտի դասուի: Ո՞վ է ճշտել Յակոբի սերնդի թիւը, ո՞վ է հաշուել Իսրայելի ցեղերը: Երա՛նի թե՛ ես մեռնէի այդ արդար մարդկանց հետ, եւ իմ յետնորդները լինէին նրա յետնորդների նման» (Թվ 23: 9-10)

Վերջինը մի երկիր է, որ ըստ Եվնոքի «գտնվում է փտության և անփտության միջև», ^[Книга тайн Еноха. - Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001] այսինքն երկնքի և երկրի միջև:

Ճանապարհը, որ տանում է այնտեղ, անցնում է Եփրատի ու Տիգրիսի ակունքներով: Աստվածաշունչը դրան «Սու՛ֆ» բառով է անվանում (որ ամենայն հավանականությամբ, մնացել է Աստվածաշնչի հնագույն տեքստից) և կապված է ժամանակավոր մարմնի փլուզման և հոգու դրսևորման հետ: Այդ անունը անձեռնմխելի է մնացել, որովհետև հասկանալի չի եղել նյութապաշտ մտքի համար: «Սու՛ֆը» սահմանվում է որպես ծով: Այդ պատճառով սխալ մեկնաբանության արդյունքում նրան *Կարմիր ծովի* հետ են նույնացրել: Բայց դա արդեն ուրիշ խոսաբանություն է, որին, գուցե, մի օր կանդրադառնամ: Սակայն ցանկացողը կարող է կարդալ դրա մասին իմ ռուսերեն և իսպաներեն լեզուներով գրված «Шесть дней творения и седьмой день» («Los seis días de la creación y el día séptimo» Բուէնոս Այրեսում 2013 թվին հրատարակված) գրքի «Суф» («Suf») գլխում:

Ամփոփելով՝ պիտի նշեմ, որ մոլորություն ստեղծող սխալ մեկնաբանություններով լի են Աստվածաշնչի թարգմանությունները և

հատկապես հայերենը, որում շատ հաճախ բուն բառի փոխարեն նյութական մեկնաբանություն ենք տեսնում, արված պատմա և աշխարհագրական տեսակետից: Դա ոչ մի ձևով չի արդարացվում, քանի որ, ինչպես նշեցի, Աստվածաշունչը հավիտյալ հոգու համար է գրված և նրան է վերաբերում, ոչ թե ժամանակավոր հասկացություններին, այսինքն՝ նրա հիմքում հոգևոր իրողություններ են դրված և ոչ թե պատմական: Իսկ վերջինները օգտագործվում են միայն նրա համար, որ համեմատությունների միջոցով հասկանալի դարձնեն այն, ինչ հոգևոր նշանակություն ունի: Աստված, ինչպես արդեն ասվեց, խոսքով է ստեղծել աշխարհը, հետևաբար, խոսքի ու անվան նշանակությունը Աստվածաշնչում մեծ կարևորություն ունի և ոչ մի դեպքում չպետք է արհամարհվի: Ուստի նաև այս հոդվածը պահանջ է դնում մեր առջև սրբագրել Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը և վերանայել հայ աստվածաբանությունը, անկախացնելով այն ընդհանուր մոլորանքից:

Մատաղի մասին

«Գրի՛ր նաեւ Պերգամոնի եկեղեցու հրեշտակին. (...) «տեսայք զործերը եւ գիտեմ, որ բնակում ես այնտեղ, ուր Մատանայի աթոռն է. բայց պահում ես իմ անունը. նաեւ չուրացար իմ հաւատը (...) Բայց քո դէմ մի փոքր բան ունեմ ասելու. այն, որ քեզ մօտ կայ վարդապետութիւնը Բաղաամի, այն մարդու, որ Բաղակին սովորեցրեց գայթակղութիւն դնել իսրայէլացիների առաջ, որպէսզի նրանք ուտեն կուռքերին զոհուած միս եւ պտոնկանան: Նոյնպէս եւ դու ունես նիկողայոսեանների վարդապետութիւնը, որ ես ասում եմ: Արդ, ապաշխարի՛ր, ապա թէ ոչ իսկոյն կը գամ եւ կը մարտնչեմ նրանց դէմ իմ բերանի սրով:»
(Հայտն 2: 12-16)

Դարեր շարունակ Հայ Եկեղեցին քարոզել է Հայաստանում Հիսուսի Խոսքը: Նրա շնորհիվ է, որ այդ Խոսքն ու բարոյական օրենքը սերտորեն միաձուլվել են հայ ժողովրդի աշխարհահայացքի հետ: Այնուամենայնիվ Եկեղեցու ծառայության մեջ առկա են մի շարք ճակատագրական մոլորություններ, որոնց պատճառով հայ ժողովրդի մեծ մասը գտնվում է մի միջնական վիճակում, որը կարելի է կոչել կիսաքրիստոնեական – կիսահեթանոսական: Այդ մոլորություններից մեկը՝ *մատաղն* է, այսինքն՝ կենդանիների զոհաբերությունը, որն ակնհայտորեն վկայում է իմ նախնիների Եկեղեցու հիվանդության մասին՝ մի հիվանդության, որը տեսնում եմ և որի մասին չեմ կարող լռել:

Անդրադառնում եմ այս խնդրին, հասկանալով, որ այն առիթ պիտի դառնա եկեղեցականների թշնամանալուն իմ դէմ: Բայց անսահմանորեն ապավինելով Հիսուս Քրիստոսի բարեգթության և Նրա Խոսքի իսկության վրա՝ ջանում եմ ո՛չ թե Եկեղեցուն վնաս հասցնել, այլ փորձել առողջացնել նրան, սթափեցնելով մեր հոգևորականների միտքն ու սիրտը:

Մատաղը, կամ կենդանիների զոհաբերությունը համարվում է հայ ժողովրդի այն հնագույն սովորույթներից մեկը, որի հետքերը կորչում են Հին Կտակարանի ժամանակներում: Հաճախ այդպիսի զոհաբերություններ մատուցվում են ուղղակի եկեղեցական բակում, որտեղ դրանց համար նույնիսկ հատուկ տեղ է նախատեսված: Եկեղեցու իշխանությունները *մատաղը* բացատրում են որպես հայկական եկեղեցու ծիսական առանձնահատկություններից մեկը, որի գլխավոր իմաստը տեսնում են *Աստծուն նվիրատվություն* անելու և *աղքատներին ողորմություն տալու մեջ*: Չնայաց նրան, որ այդ ծիսական առանձնահատկությունը այլ եկեղեցիների կողմից հեթանոսական ու բարբարոսական է համարվում, Հայ Եկեղեցին շարունակում է պնդել, որ *մատաղը* խորը մարդասիրական և քրիստոնեական սովորույթ է, որ նա հնարավորություն է տալիս հավատացյալներին բարեգթություն ցուցադրել աղքատների հանդեպ, իսկ Աստծուն՝ իրենց սերը: Արդարացնելով այն Աստվածաշնչում նկարագրված կենդանիների զոհաբերություններով, մասնավորապես, կատարված Աբելի, Նոյի, Աբրահամի, Մահակի և այլ նախահայրերի կողմից, Հայ Եկեղեցու հիերարխները վկայակոչում են նաև այն (իրենց կարծիքով) փաստը, որ Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ Ինքն Քրիստոսը ճաշակել էր Ջատկի գառան միսը, որը համարում են Մովսես մարքարեի պատգամած *մատաղը*: Նաեւ. Դր. Богословия, епископ Езник Петросян «Святая Армянская Апостольская Церковь» Южно-русская епархия Армянской Апостольской церкви, Краснодар, 1998, часть Ш, гл. П, § 8

Եվ այսպես, *մատաղը* ներկայացվում է որպես *նվիրատվություն Աստծուն*: Մակայն եկեք տեսնենք, արդյոք ցանկանում է Աստվածը այդպիսի նվիրատվություն:

Մի այլ առիթով ես արդեն գրել էի, որ Տերը մարքարենների բերանով բազմիցս անգամ նշել է արյունոտ զոհաբերության պատվիրանների խեղաթյուրված ընկալումը մարդու կողմից,

«Իմ օրենքիս փուրավոր կանոնները գրեցի անոր», - ասում էր Նա, օրինակ, Օսէի շրթերով, - «սակայն օտար բանի պես սեպվեցան: Իմ ընծաներուս զոհերուն համար անոնք միս կը զոհեն, ու զայն կուտեն, բայց Տերը անանց չի հավանիր:» (Օսէէ 8: 12-13)

Այսպիսով Տերն ուղղակիորեն մեզ հաղորդում է, որ արյունոտ զոհեր չի ցանկանում:

Նույնը Նա կրկնում է Եսայա մարքարեի շուրթերով.
«Իմ ինչի՞ն են պէտք ձեր բազմաթիւ զոհերը, - ասում է Տերը, - եւ կշտացել եւ ձեր խոյերի ողջակէզներից. ձեր գառների ճարպը, ցուլերի ու նոխազների արիւնը չէ որ ուզում եւ, եւ ոչ էլ այն, որ գաք ու կանգնէք իմ առաջ: Ո՞վ խնդրեց դա ձեզնից, մի՛ շարունակէք կոխտուել իմ գաւիթները: Եթէ ազնիւ այիւրի հաց մատուցէք ինձ՝ զուր է լինելու ձեր խնկերն էլ են պիղծ են ինձ համար. ձեր ամսամուտները, շաբաթները եւ տօնական մեծ օրը եւս անընդունելի են ինձ. ձեր պահեցողութիւնն ու հանգիստը, ձեր ամսամուտներն ու տօները ասեց իմ հոգին: Կշտացել եւ ձեզնից, այլեւս չեմ ների ձեր մեղքերը: Երբ աղօթքի համար դէպի վեր

բարձրացնէք ձեր ձեռքերը, երես եւ դարձնելու ձեզանից, եւ եթէ բազմապատկէք ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը լի են արիւնով» (ԵՍՍՅԻ 1: 11-15)

Այստեղ Տերն նորից է ընդգծում արյունոտ զոհաբերությունների ապարդյուն լինելը և նրանց պղծությունը: Իսկ մարքարե Երեմիայի միջոցով մեկ անգամ ևս հեզնանքով ասում է, որ այդպիսի զոհեր երբեկ չի պատգամել.

«Այսպէս է ասում Զօրութիւնների Տերը՝ Իսրայէլի Աստուածը. «Ձեր ողջակէզները ձեր զոհերի հետ միասին հաւաքեցէ՛ք եւ մի՛ ս կերէք: Ձեր հայրերի հետ ոչինչ չիօսեցի եւ ոչ էլ պատուէր տուեցի նրանց ողջակէզների եւ զոհերի մասին այն օրը, երբ նրանց հանեցի Եգիպտացիների երկրից» (ԵՐԵՄԻԱ 7: 21-22)

Ուրեմն, նույնիսկ Եգիպտոսից Իր որդիներին հանելուց Աստվածն նրանց չի պատվիրել արյունոտ զոհաբերություններ անել: Ավելին, Նա ցույց է տալիս այդ զոհաբերությունների անիմաստությունը, երբ սաղմոսահան Դավիթի շրթերով ասում է.

«Քո տնից հորթեր չեմ ընդունում, ոչ էլ քո հօտից՝ նոխազներ: Իմն են անտառի բոլոր գազանները, լեռների երէնները եւ բոլոր անասունները: Գիտեմ եւ երկնքի բոլոր թռչուններին, եւ դաշտի գեղեցկութիւնն իմն է: Եթէ քաղց զգամ, քեզ բան չեմ ասի, քանզի իմն է աշխարհն իր ամբողջութեամբ: Ես չեմ ուտում քո հորթերի միսը, եւ քո նոխազների արիւնը չեմ խմում:»(ՄԱՂՄ 49: 9-13)

Իրոք, մի՞թե ամեն ինչ Աստծուն չի պատկանում, մի՞թե Նա չի ստեղծել բոլոր կենդանիներին, արդյո՞ք կարիք ունի Նա նվեր ստանալ մարդուց այն, ինչ արանց այդ է Իրեն է պատկանում: Եվ արդիո՞ք ուտում է Նա կենդանիների միսը կամ խմում նրանց արյունը՝ այն կենդանիների, որոնց Ինքն է ստեղծել:

Իրեն ուզածը Տերն Ինքն է պարզաբանում մարքարենների շրթերով.

«Ողորմութիւն եմ ցանկանում եւ ոչ թէ զոհաբերում, - ասում է նա Օսէի միջոցով, - Աստծու ճանաչումն աւելի եմ ցանկանում, քան ողջակէզները» (ՕՍԷԷ 6: 6)

Իսկ երբ մարքարե Միքիան ինքն իրեն հարց է տալիս.

«Ինչո՞ւ վնասեմ Տիրոջ մօտ, ապաւինեմ իմ բարձրեալ Աստծուն, ընդառաջ գնամ նրան ողջակէզներով եւ մէկ տարեկան հորթերով: Տէրը կընդունի՞ հազարաւոր խոյեր կամ բիրաւոր պարարտ նոխազներ, տա՛մ իմ անդրանիկը ամբարշտութեան պատճառով եւ իմ որովայնի պտուղը՝ իմ անձնական մեղքերի համար»,

- Տերը պատասխանում է նրան.

«Պատմուէ՞ց քեզ, ո՞ւր մարդ, թէ ի՞նչ է բարին եւ ի՞նչ է ուզում քեզանից Տէրը. իրաւունք հաստատել, ողորմութիւն սիրել եւ պատրաստ լինել քո Տէր Աստծու յետեւից գնալու» (ՄԻՔԻԱ 6: 6-8)

Նույնը Նա հաստատում է սաղմոսահանի շրթերով.

«Աստծուն օրհնութեան պատարագ մատուցի՛ր եւ Բարձրեալի առջեւ ուխտդ կատարի՛ր:» (ՄԱՂՄ 49: 14)

Նույնը պնդում է նաև մարքարե Եսայի միջոցով, ցույց տալով միաժամանակ զոհաբերությունների սխալ ըմբռման ողբերգական հետևանքները.

«Լուսցուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք իմ աչքի առաջ ձեր չար արարքները թօթափեցէ՛ք ձեզնից, վե՛րջ տուէք ձեր չարագործութիւններին: Սովորեցէք բարի՛ք գործել, արդարութի՛ւն փնտոեցէք, փրկեցէ՛ք զրկուածի՛ն, արդարադատ եղէք որբի հանդէպ, իրաւո՛ւնք տուէք այրուն: Եկէ՛ք խօսենք իրար հետ, -ասում է Տէրը- եթէ ձեր մեղքերը արեան պէս կարմիր են, ապա ես ձեան պէս ճերմակ կը դարձնեմ, եթէ որդան կարմիր լինեն, կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ: Եւ եթէ յօժար լինէք ու լսէք ինձ, դուք կը ճաշակէք երկրի բարիքները. իսկ եթէ չկամենաք ինձ լսել, սո՛ւրբ պիտի ուտի ձեզ քանգի Տիրոջ շուրթերն ասացին այս» (ԵՍՍՅԻ 1: 16-20)

Բերված օրինակներից հետևում է, առաջինը՝ որ Տէրը մարդուց հոգևոր գոհաբերություններ է ուզում, Իր պատգամների կատարումը և ոչ թե արյունոտ գոհեր, իսկ երկրորդը՝ որ Աստվածաշնչում հիշատակված Աբելի, Նոյի, Աբրահամի, Մահակի և այլ նախահայրերի ժամանակներից եկող գոհաբերությունները աղճատված կերպով են հասկացվել, քանի որ դիտվել են, ըստ մսի մարմնի հասկացողության և ոչ, ըստ հոգու և ոգու: Այնինչ նրանք ենթադրում էին մարդու մարմնին հատուկ կենդանական բնագոյների գոհաբերությունը: Մարքաբե Եզեկիելի հետևյալ խոսքերը արյունոտ գոհաբերությունների այլաբանականության մի վառ օրինակ են ներկայացնում. Ըստ մարքաբեի, Աստվածն ասում է.

«Նա Տիրոջը, որպէս ողջակէզ, կը մատուցի մէկ տարեկան առանց արատի մի անլիկ գառ, եւ դա կանի ամէն օր վաղ առաւօտեան» (ԵԶԵԿԻԷԼ 46: 13)

Մի կողմ դնելով Տիրոջ «մի՛ սպանիր» պատգամը, որը ամեն մի կենդանի էակի է վերաբերում, ուշադրություն դարձնենք այն կատարյալ ակնհայտության վրա, որ ոչ ոք չի կարող ամեն օր Աստծուն գոհաբերել միամյա անարատ գառնուկ: Եվ ահա թե ինչու: Տարին 365 օր ունի: Նշանակում է Աստծուն հնազանդ մարդը տարվա 365 օրը պետք է ունենա միամյա մի գառ, այն էլ անարատ: Իսկ դա անհնար է, նույնիսկ եթէ անտեսենք կենդանիների բազմացման խիստ պարբերականությունը և մարդկանց տարբեր ունեվորությունը: Միայն այդ արդեն ցույց է տալիս, որ Մովսեսի պատգամները գոհաբերությունների նկատմամբ սխալ են հասկացվում և իրականում վերաբերում են մարդու ազատմանը մարմնի խառնաշփոթ բնագոյներից և խորհուրդներից: Այս խոսքերը նշանակում են, որ Տէրն ուզում է տարվա 365 օրը մարդուն տեսնել միամյա գառնուկի պէս անարատ: Իսկ այդպիսին մարդը կարող է լինել միայն այն դեպքում, եթէ օրեցօր այրի իր մեջ ամեն տեսակ մեղավոր մտքեր և խեղդի իր բոլոր մեղսագործ հավակնությունները:

Ուստի հասկանալի են դառնում Հիսուս Քրիստոսի Իր Երկնային Հորն ուղղված հետևյալ բառերը.

«Զոհ եւ պատարագ չ'կամեցար, բայց մի մարմին պատրաստեցիր ինձ համար. Ողջակէզների եւ մեղքի համար պատարագների չ'հաճեցիր: Այն ժամանակ ասեցի թէ Ահա գալիս եմ, գրքի տոմսումը գրուած է ինձ համար քո կամքն անելու, ով Աստուած»: (Եբրայ 10: 5-7, Սաղմ 40: 6-7)

Նշանակում է, որ միակ գոհը, որ Աստվածն ցանկանում է մարդուց, դա իրեն իսկ կողմից բերված գոհն է, այսինքն՝ մարմնային գոհաբերությունը: Ինչպես մեզ հաղորդում է առաքյալ Պողոսը, Տիրոջ մարմինը, սուրբ լինելով հանդերձ՝ «մեղանշական մարմնի» նմանություն ուներ և Իրեն մարմնի գոհաբերությունը «մեղքը մարմնի մեջ դատապարտելու» համար էր: (Հռոմ 8: 3)

Այդ իսկ պատճառով էլ առաքյալը կենդանիների գոհաբերությունը հեթանոսության դրսևորում էր համարում, ինչպես դևերին բերված գոհաբերություն, իսկ այդ գոհի միան ուտելը հավասարեցնում դևերի սեղանից վայելմունքին կամ դևերին հաղորդվելուն:

«Տեսէք Իսրայէլին մարմնի կողմանէ, - գրում է նա. - չէ՞ որ գոհուածներն ուտողները մասնակից են սեղանին: Արդ ի՞նչ ասեմ. մի թէ կուռքը մի բան է, եւ կամ թէ կուռքերի գոհուածները մի բան են: Բայց այն որ հեթանոսները գոհում են, դէւերին են գոհում, եւ ոչ թէ Աստուծուն. Իսկ ես չեմ կամենում, որ դուք դէւերին մասնակից լինէք. չէք կարող Տիրոջ բաժակը խմել եւ դէւերի բաժակը. Չէք կարող Տիրոջ սեղանիցը վայելել՝ եւ դէւերի սեղանիցը:» (1 ԿՈՐՆԹ 10: 18-21)

Եվ մի այլ տեղ.

«Բայց եթէ մէկն ասէ ձեզ, թէ Դա կուռքի գոհուած բան է, մի ուտէք՝ նորա պատճառովը որ իմացրեց, եւ խղճմտանքի պատճառովը. Որովհետեւ Տիրոջն է երկիրը եւ նորա բոլոր լիութիւնը:» (1 ԿՈՐՆԹ 10: 28)

Մտացվում է, որ Հայ եկեղեցու հեղինակությունները անտեսում են առաքյալի այս բառերը: Եվ ոչ միայն այս, այլ նաև Ավետարանների հաղորդությունները, որ վկայում են այն կարծիքի անհեթեթության մասին, թե իբր Քրիստոսը ճաշակել է զատկի գառան միսը:

Հայտնի է, որ Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ Նա զատկի գառան փոխարեն Իրեն է առաջարկեց, երբ հացը վերցնելով, «*օրհնեց ու կտրեց եւ տուեց աշակերտներին ու ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»* Եւ բաժակ վերցնելով՝ *գոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր ուխտի իմ արիւնը, որ թափուում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար:» (ՄԱՍՏԹ 26: 26-28)*

Ուրեմն հարց է ծագում. Ինչպե՞ս կարող է Եկեղեցին միևնույն ժամանակ հաղորդել մարդկանց և Աստծո և դևերի սեղանին:

Ավելին, հաստատել, որ Քրիստոսը ճաշակել է զատկի առիթով գոհաբերված գառը, նշանակում է անտեսել Իր գոհաբերության էությունը, որը նրանումն էր, որ **զատկի գառը փոխարինվում էր Տիրոջ մարմնով:** Չատիկը՝ Ինքը Տերն է լինելու և ոչ թե գոհաբերված կենդանու միսը: Այդ նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց.

«Յոյժ ցանկացայ այս Պասեքի ընթրիքը ուտել ձեզ հետ, քանի դեռ չեմ չարչարուել:» (ՂՈՒԿ 22: 15)

Իսկ ճաշակել Իրեն «մարմինը» նշանակում է ճաշակել կյանքի մաքրագույն հացը, որը Աստծո Խոսքն է:

Այսպիսով Նա զգուշացրեց, որ գոհաբերված կենդանու միսը չպետք է ուտել, որովհետև Նա փոխել է այն Իրենով: Գառնուկը Ինքն էր: **Եվ շարունակել**

գոհաբերել որևիցե կենդանու միսը՝ նշանակում է զրոյի հավասարեցնել Տիրոջ բերած գոհաբերությունը: Հենց այդ պատճառով է, որ առաքյալն ասում է.

«Մաքրեցէք, դէ՛ն նետեցէք հին խմորը, որպէսզի նոր զանգուած լինէք, առանց թթխմորի. քանզի Քրիստոս մեր գատիկը, մորթուեց» (1 ԿՈՐՆԹ 5: 7)

Այս բառերը վկայում են, որ օրհնելով կենդանիների գոհաբերությունները, Հայ Եկեղեցին օգտվում է *«հին խմորից»*, թույլ չտալով, այդպիսով, որ ծիսականները *«նոր»* խմոր դառնան:

Սակայն այդօրինակ գոհաբերությունների հրեշավորությունը կայանում է նաև նրանում, որ այն մատուցողները ի հակառակ Փրկչի նշված Խոսքին, գոհի արյունով խաչ են գծում ներկաների ճակատին, ի նշան Աստծո օրհնության, այսպիսով փոխարինելով Քրիստոսի «արյունը» կենդանու արյունով: Այս ամենը արդարացնում են նաև այն հանգամանքով, որ իբր Քրիստոսը գատկի գառան միս է կերել: Բայց հիշենք, որ Փրկիչը ոչ մի դեպքում չէր կարող դա անել, գոնե այն պատճառով, որ չապրեց մինչև Ջատկի տոնը, քանի որ նրան խաչեցին այդ տոնի նախօրյակին՝ ուրբաթ օրը: Իսկ Խորհրդավոր Ընթրիքը տեղի էր ունեցել հինգշաբթի օրը: Այդ մասին շատ պարզ ձևով մեզ պատմում է Հովհաննէսի ավետարանը, որը ի տարբերություն մյուս Ավետարանների ավելի հաջորդաբար և ամբողջական ձևով է ներկայացնում Քրիստոսի խաչման նախօրյակը: Բացի դրանից, պարզ ասում է.

«Իսկ քանի որ ուրբաթ էր, որպէսզի մարմինները չմնան խաչի վրայ մինչև շաբաթ օրը, - որովհետև այն շաբաթը տօնական մեծ օր էր, - հրեայ առաջնորդները Պիղատոսին աղաչեցին, որ կոտրեն նրանց սրունքները եւ վերցնեն նրանց» (ՅՈՒՎՀԱՆ 19: 33)

Ուրեմն, Ջատկի տոնի օրը Հիսուսն արդեն մահացած էր:

Այսպիսով աղքատների հանդեպ գթասրտության դրսևորումը չի կարող արդարեցնել մատաղը, քանի որ Տերը անարյուն գոհաբերություններ է ցանկանում: Եվ Նրան հաճոյանալու համար մարդը կարող է չունեւորների հետ կիսել այն ամենը, ինչ ունի, ներառյալ նաև ուտելիքը, սակայն առանց արյուն թափելու:

Իհարկէ, Հայկական Եկեղեցու ներկայացուցիչները գիտեն այս ամենը, սակայն դրան պատշաճ նշանակություն չեն տալիս, կարծես թէ *«օտարուտի համարելով»* այն: (Օսէէ 8: 12-13)

Արդյունքում նրանք, ովքեր արյունոտ գոհաբերություններ են անում իրենց տգիտության պատճառով, առանց հասկանալու, **արժէքում են Քրիստոսի գոհաբերության փրկարար նշանակությունը և հաղորդվում են դևերի սեղանին:**

Պարզ է, որ այդպիսի գոհաբերությունները միայն հեռացնում են Քրիստոսից և չեն սերմանում պատկառանք կյանքի նկատմամբ: Հակառակն, դրանք դաժանություն և անսրտություն, անտարբերություն և ինքնահաճություն են աճեցնում մարդկանց մեջ:

Տեսնելով այդ ամենը՝ ինքս ինձ հարցնում եմ. Մինչև ե՞րբ պիտի Եկեղեցին իրեն կամքը հակադրի Աստծո կամքին: Ե՞րբ նա, վերջապէս, կսթափվի և կդաթարի

հետևել տգետ մարդկանց քմահաճույքներին: Ե՞րբ իր մեջ ուժ կգտնի վերջ տալու հեթանոսության անհեթեթ մնացուկներին, որոնք պղտորում են մեր Փրկչի զոհաբերության իմաստը: Ե՞րբ նա այդ զոհաբերությունը մատչելի կդարձնի հասարակ ծխականի համար, որը այժմ չգիտի, ինչ է անում, քանզի իրեն քրիստոնյա համարելով, մնում է նույն անգիտակից ու անօրեն հեթանոսը, ինչպիսին էր մինչև Քրիստոսի գալը:

Գուցե, Եկեղեցու կերպարափոխումը ինչ որ մի բան կփոխի նաև հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի մեջ, որովհետև այս աշխարհում ոչ մի բան առանց պատճառի չի լինում:

Ամփոփելով այս նախնական փոքրիկ գրքույթը՝ ուզում եմ նորից շեշտել, որ, ինչպես Աստվածաշնչի թարգմանությունը, այնպես էլ հայ աստվածաբանությունը հրատապ սրբագրման կարիք ունեն:

Աստվածաշնչի օգտագործված թարգմանությունները հետևյալներն են

1. <http://www.armenianchurchlibrary.com/westernarmenianbiblefromenglish-arm.html>

Հայ Առաքելական Եկեղեցու Գրադարան
Աստվածաշնչյան Թարգմանություններ եւ Ուսուցումներ
Աստվածաշնչի Արեւմտահայերեն Թարգմանությունը Անգլերենից

2. <http://www.armenianchurchlibrary.com/files/easternarmenianbible/>

Հայ Առաքելական Եկեղեցու Գրադարան
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ
Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, 1994
Հայաստան, Երևան 375015, Չաքիեան 6/26

3. Աստվածաշնչի Արարատ թարգմանություն

Նշված թարգմանություններից ամենա անհաջողը երկրորդն է թվում, քանզի պարունակում է իր մեջ տողեր, որոնք, կարծես թե, մինչև վերջ չեն մտածված: